



ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱՄՅԱՆ

Sergey Abramyan

Hayereni ketadru t'yan

# ՎԱՅԵՐԵՍԻ Կենսադրույուն



Ուսումնական ձեռնարկ

Lis unnakas dzernark

ԵՐԵՎԱՆ «ԼՈՒՅ» 1999

ԿԱՇԻ  
ՀՐԱԺ  
ՐԿ  
8477  
.ԱՅ71  
1999

Պատասխանատու խմբագիր՝ քանասիրական  
գիտությունների դոկտոր, դրոֆեսոր

**Դ. Խ. Քարսեղյան**

Արքահամյան Ս. Գ.

Հայերենի կետադրության: Ուսումնական ձեռնարկ.-Եր., «Լուս», 1999թ.

Սույն ձեռնարկում ներկայացված են առջի հայերենի կետադրության համակարգված օրինաչափորյությունները, որոնց մի մասը հաստատված է ՀՀ Նախարարների Խորհրդին առընթե Տեղմինարանական կոմիտեի կողմից, մի զգայի մասը, Տարիների ընթացքում գործածվելով շարադրության դրդության համապատասխան դասագրում, արդեն կայունացել է, իսկ մնացած կանոնները սահմանված են տղագիր խոսքում գործող հիմնական օրինաչափորյությունների հիման վրա:

Ձևադրությունը նախատեսվում է դիմումների, ուսուցիչների, ուսանողների, աւագերների, հրատարակչորյությունների ու խմբագրությունների աշխատղների և բոլոր նրանց համար, ովքեր ուզում են ժրադրելով հայերենի ուրագրության այս կարևոր բազավայրին:

Ա 4306020200(03) 1999  
702(01)99

ISBN 5-545-01378-4

© Սերգեյ Արքահամյան, 1999

© «Լուս» հրատարակչորյություն, 1999

**ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԻ, ԿՄԱՅՆԱՐԿՄԱՆ ԵՎ  
ԿԻՐԱԾ-ՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՌԻ ԴԱՐՁԵՐ**

ՏՐԱ  
32668193  
RUSS  
6/7/00

Լեզվի բնական, կենդանի վիճակը բանավոր խոսքն է: Գրավոր խոսքը բանավորի գրային պատկերն է: Բանավոր խոսքի արտասանական, հօշական հատկանիշները, դադարները նպաստում են մտքի ճիշտ հաղորդմանը, խոսողի տարրերը վերաբերմունքների, հույզերի լիարժեք դրսությանը: Գրավոր խոսքում այդ նույն նպատակին են ծառայում կետադրության նշանները: Ճիշտ կետադրությունը էապես նպաստում է գրավոր խոսքի լիարժեք համապատասխանությանը բանավորին: Այնպիս որ՝ կետադրության նշանների կիրառություններին, նրանց նրբություններին տիրապետելը գրագիտության բարձրացման կարևոր պայմաններից մեկն է: Կետադրական նշանների դերի նաև որոշ պատկերացում կարող է տալ, օրինակ, հետևյալ նախադասությունների համեմատությունը:

Դու հիմա գնում ես:

Դու հիմա գնո՞ւմ ես:

Դու հիմա գնո՞ւմ ես:

Դու հիմա գնո՞ւմ ես:

Միևնույն բառական կազմն ունեցող այս նախադասությունները կատարում են տարրեր հանդրդակցային դեր և կարող են գործածվել տարրեր նպատակներով: Առաջին նախադասությունն արտահայտում է հաստատում, երկրորդ՝ հարցում, երրորդ՝ կարգադրություն (հորդը), վերջինը՝ հաստատական վերաբերմունքի հետ միասին նաև շեշտված հուզականություն: Այդ նշանակությունները դրսուրվում են տարրեր հեշերանգների շնորհիվ, որոնք գրավոր խոսքում արտահայտվում են համապատասխան նշաններով:

Առանձին դեպքերում խոսքի գրավոր տարրերակը նույնական ունենամ է մտքի ձևավորման առավելությունը բանավորի համեմատությամբ:

Կարդացե՛ք հետևյալ երկու նախադասությունները, որոնք արտահայտված են միևնույն բառերով ու թերականական ձևերով:

**Հայաստանի Հանրապետությունը կհաղորդարի դժվարությունները:**  
**«Հայաստանի Հանրապետությունը » կհաղորդարի դժվարությունները:**

Բանավոր խմբում Մրանք կը նկալի են որպես մինչույն նախադասություն: Մինչեւ գրավոր խոսքում դրանք տարբեր նախադասություններ են, արտահայտում են տարբեր միտք: Եվ դա հասկացվում է երկրորդ նախադասության մեջ գործածված շակերտմերից, որոնք ընթերցողին հուշում են, որ խոսքը վերաբերում է այդ անոնք կրող օրաբերին, մինչեւ առաջին նախադասության մեջ նկատի անենք արդի հայ պետականությունը: Իհարկե, բանավոր խոսքն ունի իր հնարավորությունները՝ այսպիսի դեպքերում միարյ ճշգրիտ հաղորդելու և բնկայելու համար: Երկրորդ նախադասության դեպքում կարելի էր գործածել «օրաբերը» բառը, և միտքը միանգանայն ճշգրիտ կիխներ: Բայց նենց կարեարն այն է, որ տվյալ դեպքում շակերտմերն օգնում են հասկանալու համար այն, ինչ որ բանավոր խոսքում արտահայտվում է «օրաբերը» բառով:

Բերենք այդ կարգի բազմաթիվ փաստերից մեկը: Հաճախ ենուստանությամբ, ռադիոյով և այլ դեպքերում հաղորդավարը, գեկուցողը գրավոր նյութը կարդախ մեջքերքով խոսքի կապակցությամբ գործածում են այսպիսի արտահայտություններ՝ «մեջքերման սկիզբ», «մեջքերման ավարտը», որոնցով հասկացնում են ունկնդիրներին շակերտմերի գործածությունը ուղղակի խոսքի դեպքում: Կետադրական որոշ նշանների իմաստային, տեղեկության դերը ակնհայտ երևում է նաև բազմակետի գործածության դեպքում, երբ մեջքերման մի մասի կրծատումը նշվում է բազմակետով: Եվ գրավոր խոսքում այն հասկանալի է դառնում բազմակենտի շնորհիվ, բանավոր խոսքում չի հասկացվում, եթե այդ մասին հատու չի պատում:

Տվյալ իմաստի ճիշտ ձևավորման համար նաև հատուկ կարեարություն է ստանում կետադրական նշանի գործածման տեղի ճշությունը: Դիտարկենք ենույթայի երկուողը:

*Հայմ իր ուղեանը գրեի պես է,  
Մի այրեք ճրամ, մեկ է լոյս կտա...*

(Վ. Ներսիսյան)

Շեշուր «այրեք» բայածի վրա դնելու դեպքում բոլորովին կփոխվի նախադասության միտքը, բանի որ արգելական հրամայականը (մի՛ այրեք) կդառնա հաստատական հրամայական (այրեք):

Այս և նման փաստերը մի անգամ ևս հաստատում են մի ճշմարտություն՝ կետադրական կանոնների հիմնավոր իմացության և ճիշտ կիրառության ամերաժշտությունը գրավոր խոսքի ճիշտ ու նպատակային կառուցման գործում:

Այս հատվածն անփոփենք ենույթայով: Հիշո՞ւմ եք՝ դասագրքերում տրվում են վարժություններ, որոնցում բաց են քորնված կետադրական նշանները: Այդպիսի բնագրերը կոչվում են «համը բնագրեր»: Շատ դիպուկ բնորոշում է: Այս, գրավոր խոսքն առանց կետադրության համը կամ համարյա համը է, կետադրությունն է այն դարձում «խոսդ»:

\* \* \*

Կետադրական նշանները սպորտարար բաժանվում են երեք խմբի՝ տրոհության, բացահայտության և առողանության: Այս նշանների միջև հրատակ սահմանագիծ չկա: Դա վերաբերում է հատկապես տրոհության և բացահայտության նշաններին, որոնց եռյան, յորպահատկությունների բնութագրման հարցը հատուկ բացարության կարիք է գումար:

Տրոհության նշանների նշանակյանները քերականական դեր ունեցող դադարներ են, ավելի ճիշտ՝ տրոհումներ (ինքնուրույն նախադասությունների, բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների, նախադասության անդամների, բառերի միջև): Ուրեմն կետադրության նշանների այս տեսակի «տրոհության» անվանումը նկատի է առնվազան այնպիսի տրոհությունը, որն ունի քերականական նշանակություն:

Տրոհության նշաններն են վերջակետը, միջակետը, ստորակետը, բուրը, փակագծերը:

Բացահայտության նշաններն իրենց բնույթով ու դերով ենապես տարբերվում են առողանության ու տրոհության նշաններից նրանով, որ ի տարբերություն սրանց բացահայտության նշանները բնորոշվում են ոչ թե արտասանական նշանակյալի նշումով, այլ ուղղակի իմաստային, ճանաչողական դերով: Դրանք նպաստում են լեզվական տարբեր միավորների, նրանց բաղադրիչների իմաստային, ճանաչողական տարբեր հատկանիշներ պարզերուն, բացահայտելուն:

Այսպես, եթե խոսքի որևէ հատված, նախադասություն, արտահայտություն շակերտմերի մեջ է առնվազ, հասկացվում է, որ դրանք մեջքերված են որիշի կամ սեփական խոսքից: Եթե հատկանիշ արտահայտությունը շակերտմերի մեջ է առնվազ, այն կարող է հասկացվել հակառակ կամ հեզնական իմաստով: Օրինակ՝ *«Ա և համես» է, որին շատ են զույգում, այնան իրեն երջանիկ է զույգում:*

Միուրյան գծիկով հասկացվում է, որ իրար միացած միավորները միևնույն բանի բաղադրիչներ են: Ինչպես ինչ-ոք, Նար-Դոս; Ենթամնայով նշվում է, որ հաջորդ տուրը տարկած հնչյունախումբը նախարդ տողի վերջում եղածի հետ մրասին կազմում է մեկ բառ, որ դրանք մեկ բառի մասեր են: Բազմակետով հասկացնում ենք, որ մեջքերվող խորքի տվյալ մասում կատարված է կրծառում, բայց է բողնոված ինչ-ոք նաև:

Տրոհորյան ու բացահայտորյան նշանները մենք բնութագրեցինք՝ իմք ընդունելով նրանց առաջնային հատկանիշները և առավել բնորոշ ու տարածված կիրառությունները: Կետադրության նշանների այդ երկու տեսակներն ունեն շփման եզրեր, դրանց միջև անանցանելի սահման չկա: Նշնոր այսպիսի փաստեր:

Տրոհորյան նշանների միջև յուրահասունկ բնույթ ունի բուրք: Նրա դերը մոտենում է բացահայտմանը՝ հատկապես բացահայտիչը բացահայտյալի հետ կապակցելիս: Բայց բուրք մի շական տարբերություն ունի բացահայտորյան նշաններից և ընդհանրություն՝ տրոհորյան նշանների հետ: Դա այն է, որ բուն բացահայտորյան նշանները, ինչպես նշեցինք վերը, տրոհորյուն չեն արտահայտում, իսկ բուրով արտասանական տեսակետից նշվում է ինքնատիպ տրոհման հատկանիշ, որ բնորոշ է տրոհորյան նշաններին: Այս առումով բուրքը, երկաելի բնույթ ունենալով հանդերձ, ավելի շատ տրոհորյան նշան է: Լեզվական միավորների դասակարգման մեջ այսպիսի փաստերը շատ են: Նման դեպքերում լեզվական տվյալ միավորի տեսակը որոշվում է առավել բնորոշ հատկանիշի հիման վրա, իսկ մյուս՝ երկրորդական հատկանիշը նկատի է առնվում տվյալ միավորի, իրակության ամբողջական գնահատման դեպքում:

Այսուհետև՝ միջակետը հայտնի է որպես տրոհորյան նշան, և նրա հիմնական կիրառությունները, իրոք, արոհական են: Բայց բառերի կրծառ գորորյան դեպքում նրա գործածությունը (օրինակ՝ *Արդու Ս. Արենյան*) բացահայտման արժեք ունի և ոչ բայց տրոհորյան: Ուրեմն ինչպես գնահատել միջակետի ընդհանուր դերը, կետադրության ո՞ր տեսակի շարքը դասել միջակետը:

Նման դեպքերում հարցի լուծման երկու ելք կա, կամ միջակետի այդ միակ կիրառությունը պետք է առանձնացնել նրա մյուս կիրառություններից և տանել բացահայտորյան բաժինը, կամ այդ միակ կիրառությունն էլ պետք է

ներկայացնել մյուսների հետ միասին՝ նշելով միաժամանակ, որ նրա կիրառություններից այդ մեկը առավելապես բացահայտորյան արժեք ունի: Նկատի ունենալով, որ կետադրության ձեռնարկը գործնական նպատակի է ծառայում, և այս առումով պետք է առավելագույն շափով մատչելի լինի օգտվողներին, ընտրեցինք երկրորդ ուղին: Այս դեպքում կանոններից օգտվողը, որին հաճախ չեն հետաքրքրում դասակարգումների հիմունքի ու նրա կիրառման տեսական մանրամասնորյունները, տվյալ նշանի բոլոր կիրառություններին կծանոթանա միևնույն բաժնում, որը առավել շափով է բնորոշ այդ նշանին:

Փակագծերը ևս ըստ եռյան տրոհորյան նշան են: Սրանց ներառած ներդրյալ, միջանկյալ միավորները բանափոր խորում առանձնանում են նաև արտասանական հատկանիշով. որոշ դադարով տրոհվում, բաժանվում են բառից, նախադասությունից և հատկանշում են ավելի ցածր հնչումով: Հիշենք, որ միջանկյալ միավորի՝ ստորակետով տրոհումը բնականարար տրոհորյան մեջ է ներկայացվում: Նկատի ունենանք, որ փակագծով տրոհումն ավելի զգալի է հենց արտասանական տեսակետից:

Հմմտ. *Մեր դպրոցը, ինչ խոս, օրինակելի է բոլոր առումներով:*

*Մեր դպրոցը (սաօրեն Դավիթ Չափարյան) օրինակելի է բոլոր առումներով:*

Ըստ երևույթին, փակագծերի գնահատման և նշված մյուս հարցերում դեր է կատարել այն հանգամանքը, որ բայց փակագծերը և բայց բացահայտություն համարված հիշյալ մյուս նշանները, իրոք, կատարում են բացահայտման դեր: Բայց տրոհորյան բոլոր նշաններն եւ ունեն քերականական հարաբերություն դրսեաբնություն, իմաստույին ու քերականական հարաբերություն բացահայտելու դեր, այլապես նրանք չեն ստեղծվի և չեն գործածվի: Ասենք, վերջակետը, որ ամենասանառարկելի տրոհորյան նշաններից է, իրենով նշան դրաբարով ցույց է տալիս նախադասության ավարտը, հնչերանգային մի հատկանիշ, որը առողջաման հետ միասին ձևավորում է նախադասությունը: Դրանով իսկ վերջակետը գրավոր խորում, ուրեմն և նրանով նշված տրոհումը բանագիր խորում կից նախադասությունների կազմ ու հարաբերություն են արտահայտում: Մինչդեռ բացահայտորյան նշանները, ինչպես նշեցինք վերը, իրենց դերը կատարում են՝ առանձ ունենալու արտասանական, տրոհական նշանակյալ: Այդ պատճառով էլ ասում ենք, որ տրոհորյան

նշաններն արտահայտում են քերականական դեր ունեցող տրոհումներ:

Երկու խոսք՝ տրոհության նշանների արտահայտած դադարի մասին: Տրոհության տարրեր նշանների արտահայտած դադարները, բնականաբար, տարրերիվում են իրարից: Բայց այդ տարրերությունը և ամեն մի նշանի արտահայտած դադարի չափը, ինչպես պահանջում են ոմանք, բացարձակացնել և արտահայտել մարեմատիկական ճշտության հասնող բնութագրումով՝ հնարավոր չէ: Տրոհության տարրեր նշանների դադարի չափը որոշվում է նոյն կամ նոյնանման խորքում գործածված տրոհության մյուս նշանների դադարի համեմատությամբ: Ստորակետի նշած դադարը սովորաբար բնութագրվում է **փոքր** բառով, միջակետին՝ համեմատաբար **զգալի**, վերջակետին՝ համեմատաբար **մեծ** բառերով: Կրկնում ենք, որ **փոքր**, **զգալի**, **մեծ** բառերը գործածվում են համեմատության կարգով: Ավելացնենք նաև, որ միևնույն նշանի արտահայտած դադարը կարող է տարրեր լինել խոսելու տարրեր իրադրություններում, տարրեր ուներում:

Այնուհետև՝ տրոհումը սոսկ դադարի չէ, այլ դադարի և տրոհվող եզրերի յուրահատուկ հնչման գուգորդում՝ պայմանավորված տվյալ կառույցի բաղադրիչների քերականական հարաբերության բնույթով: Մեկական կամ բացահայտական արժեք ունեցող տրոհումը տարրեր է համադաս միավորների տրոհումից, վերջիններիս տարրեր աստիճաններն էլ իրարից: Բացահայտչի ու բացահայտյալի տրոհումը փոքր դադարի և բացահայտյալի վերջին վանկի տոնի բարձրացման յուրահատուկ գուգորդում է: Ծարակայութեն համագործ միավորների՝ տրոհման դեպքում համապատասխան դադարին (**փոքր**, **զգալի**, **մեծ**) գուգորդվում է շարակայութեն համարժեք բաղադրիչների նույնադիալ արտաբերում, որ նման է բվարկման հնչերանգին:

Այնպես որ կետադրական նշանների դասակարգումը կատարվում է իմք ընդունելով նրանցից յուրաքանչյուրի առաջնային հատկանիշը, հիմնական կիրառությունները:

Անցնելով առօգանության նշաններին (**չեկի**, **հարցական** և **բացականական**) նշենք, որ սրանք իրենց բնույթով ինքնատիպ են և որոշակիորեն սահմանագործված են կետադրության մյուս նշաններից: Դա պայմանավորված է նրանով, որ ի տարրերություն տրոհության և բացահայտության նշանների, պահանջնորդյան նշաններն ունեն կամային-վերաբերունքային բնույթ: Հարցական, հրամայական (այդ բվում՝ եղբարական), բացականչական հնչե-

քանզիները խոսողի կամքի, վերաբերմունքի դրսևորումներ են՝ տարրեր նպատակներով: Եվ այդ կամային վերաբերմունքները արտահայտվում են համապատասխան կետադրական նշաններով (իհարկե, նաև այլ միջոցներով):

Կետադրությունը կանոնարկելիս և կանոնները կիրառելիս պեսոր է նկատի ունենալ մի կարևոր համգամանք: Եթե բառերի ուղղագրությունը բառին վերաբերող ինքնամփոփ բնագավառ է, ապա կետադրությունը շատ լայն ընդգրկում ունի և բափանցում է խոսքի ուղրությը: Խսկ խոսքը իր առարկայական ու վերաբերմունքային առումներով շատ բազմազան է ու բազմաբնույթ: Նրա կառուցման առարկայական օրինաչափությունները հաճախ խաչաձևվում են խոսողի վերաբերմունքի գործոնի հետ: Այս հանգամանքը զգալի չափով դժվարացնում է կետադրության կանոնարկումն ու կանոնների կիրառումը:

Դիտարկենք հետևյալ կապակցությունը.

**Տոքր խեղդում էր նրանց կիսամերկ մարմինները: Խոշոր կայծերը անջրեի նման հեղեղվում էին նրանց զլիին: Խորասուզված իրենց զործի մեջ կարծես նրան ոչինչ չէին զգում:**

Այս ինքնուրույն նախադասությունները ներկայացնում են մեկ ամբողջական նկարագրություն, և նրանց մտքի սերտությունը բույլ է տպիս այս կապակցության ինքնուրույն նախադասությունները միացնել իրար՝ դարձնելով մեկ բարդ նախադասության բաղադրիչներ:

**Տոքր խեղդում էր նրանց կիսամերկ մարմինները, խոշոր կայծերը անջրեի նման հեղեղվում էին նրանց զլիին, խորասուզված իրենց զործի մեջ կարծես նրան ոչինչ չէին զգում:**

Նաև կարելի է այդ բաղադրիչ նախադասությունները կապակցել որպես կիսանկախ միավորներ, որոնք իրարից բաժանվում են զգալի դադարով:

**Տոքր խեղդում էր նրանց կիսամերկ մարմինները. խոշոր կայծերը անջրեի նման հեղեղվում էին նրանց զլիին. խորասուզված իրենց զործի մեջ կարծես նրան ոչինչ չէին զգում:**

Միևնույն բաղադրիչ նախադասությունների իմքնուրույնության տարբեր աստիճանները, դրանցով պայմանավորված՝ արտասանության տարբեր յուրահատկությունները, հատկապես տարբեր չափի դադարները, ինչպես տեսնում ենք, գրավոր խոսքում կարող են նշվել տրոհության տարբեր նշաններով՝ վերջակետով, ստորակետով, միջակետով։ Այս ճշշտ տարբերակների ընտրության հարցում դեռ է կատարում այն հանգամանքը, որ շարակայուսական միավորի իմքնուրույնության աստիճանը ոճական որոշակի արժեք տնի. լեզվական միավորի իմքնուրույնացումը նշուքը շեշտելու միջոց է։

## Այսայիսով՝

Բառական միևնույն կազմն ունեցող նախադասությունները տարբեր նշաններով տրոհելու հնարավորությունը ցույց է տալիս, որ գրավոր խոսքում տրոհության ամեն մի նշանի կիրառություն բանավոր խոսքում ունի քերականական, ոճական պատճառաբանվածություն, և ցանկալի է, որ բանավոր խոսքի իմաստային ու ոճական նրբությունները առավելագույն հաշվի առնվելի գրավոր խոսքում։

Առողանության նշանների կանոնարկման և կանոնների կիրառության հարցում կա այլ կարգի դժվարություն, որը պայմանավորված է խոսդի վերաբերմունքով, վերջինիս տարբեր երանգներով, նպատակի բնույթով։ Այս հարցում դեռ է կատարում նաև խոսքի իրադրությունը։

Համեմատները հետևյալ երկու նախադասությունները։

**Եկե՛ք, բույրիկնե՞ն, եկե՛ք չեր գողամարդկանց ամորանը լովեր։**

**Վաչե՛ն, Վասա՛ կ, Մուշե՛ն դ.. վե՛ր կացեր, լուսե՛ն ք օրը դապասպանի։**

Միևնույն կառուցվածքն ունեցող այս երկու նախադասություններում հայերեն խոսքի ոճական նրբություններին վարպետորեն տիրապետուող Դերենիկ Դեմիրճյանը գործածել է առողանության տարբեր նշաններ՝ առաջին նախադասությունում՝ շեշտ, երկրորդում՝ բացականչական նշան։ Առաջին նախադասությունը Սրբունի կոչն է, երդորքը, որով դիմում է իր կողքին գտնվող ոշտունի կանանց, իսկ երկրորդ նախադասությունը Մամիկոնյան մեծ տիկնոց խոսքն է։ Հիշենք այդ իրադրությունը, որին և համապատասխա-

նում է խոսքը։ Դավաճանության մասին լուրն առնելուն պես, զիշերային մոայլ խավարի մեջ Մամիկոնյան մեծ տիկնոցը աչքերը սևեռած, դրահակը շրբություններում ինչ-որ մրմունջների գնում էր դեպի Մամիկոնյանների տոհմական հանգստարանը։ «Հանկարծ մի ոչ մարդկային, ավելի շուտ պառաված արձվի մի խոլ կրնչոց կտրեց բանձրացած լուրյունը», որով դիմեց Վարդանի հոր՝ Հանձազասպ Մամիկոնյանի շլրիմին, դիմեց հանգուցյալ Համազասպին...»։ Եվ ապա «զրույյունը ավելի զարդութելի եղավ...»

**Վաչե՛ն, Վասա՛ կ, Մուշե՛ն դ.. վե՛ր կացեր, լուսե՛ն ք օրը դապասպանի։**

Այս կարգի փաստերը, որոնք, ի դեպ, եզակի չեն, պեսոք է հաշվի առնվեն թե կանոնարկման մեջ և թե՝ ստվորողի, առհասարակ բոլորի գրավոր խոսքում, քանի որ գրավոր խոսքը գրական բանավոր խոսքի գրային պատկերն է, գրային արտահայտությունը։

Արդի հայերենի կետադրության թերություններից մեկը մի շարք դեպքերում ձևաբանական գործոնին առաջնություն տալիս է շարակայտականի, խոսքայինի համեմատությամբ։ Այսպիսի դեպքերից է, օրինակ, հրամայական բայածելի, կրկնադիր համադասական շաղկապմների պարտադիր շեշտադրության պահանջը, որ մինչև այժմ էլ տեղ է գտնում որոշ գործերում և կետադրության պրակտիկայում։ Կենդանի խոսքի դիտարկումները ցույց են տալիս, որ կրկնադիր շաղկապմները շատ դեպքերում չպետք է շեշտադրել։ Ահա շատ ստվորական փաստերից մեկը։

**Եվ չըկար ոչիմ, որ սիրտու դյուքեր՝**

**Ոչ սիրու կարտս, ոչ բախսի ծարակ,**

**Ոչ հարստության և մեծության քեռ։**

(Վ. Տերյան)

**Ոչ...ոչ կրկնադիր շաղկապի շեշտունով այս անքերի, բարձրարկեստ, կենդանի խոսքը կիմչեր անքնական, արիեստական, կխախտվեր բանատեղծական տղերի ոիբմը, և այս ամենի հետևանքով կթուլպանար խոսքի ներգործությունը։**

Մեկ օրինակ էլ քերենք **և....և կրկնադիր շաղկապով, որը նույնպես չի շեշտվում.**

Եվ ամսահ եմ քո հավքերը ամես,  
Եվ անմասի եմ քո ճանապարհերը,  
Եվ ամսահ եմ քո քարերն ու ծառը,  
Քո դարը, տառը...

(Վ. Հակոբյան)

Այսպիսի դեպքերում պետք է ենթակա գրական կենդանի խոսքի արտասանական օրինաչափության վրա:

Կետադրության բնազավառում կարևոր հանգամանք է ազգային ավանդույթների պահպանումը, եթե դրանք, իրոք, առավելություն ունեն այլ լեզուների կետադրության համեմատությամբ: Տարբեր լեզուներում գործող կետադրության ընդհանրությունների հետ միասին շատ լեզուներ ունեն յուրահատկություններ: Սա վերաբերում է նաև հայերնին:

Հիշեք, օրինակ, առողջապահության նշանները համապատասխան քառական դրվելը (ի տարբերություն այն լեզուների, որտեսում դրանք դրվում են նախադասության վերջում), բուր նշանը՝ բացահայտման դերով, կախման կետերի ու բազմակետի տարբերակումը: Վերջին տարիներին խախտվեցին բուրի, ինչպես և կախման կետերի ու բազմակետի կիրառությունների օրինաշափությունները: Դա սկսվեց հատկապես ոռուերներից կատարված թարգմանություններով (մասնավորապես մանուկում) և զգալի չափով տարածվեց նաև ինքնույն քառականության էջերում: Ավելին, նույնիսկ վորձ կատարվեց՝ հիմնավորելու կախման կետերի և բազմակետի տարբերակման ավելորդությունը. իբր թե կախման կետերն ու բազմակետը նույն դերն են կատարում, դրվում են նախադասության բաց բունքած հատվածի վորչարեն և տարբերվում են մեկ կետով: Մինչդեռ ամեն մի աշակերտ գիտի, որ բազմակետը և կախման կետերը էապես տարբեր նշաններ են.

ա) Բազմակետով նշվում է՝ «մեջքերման որևէ մասի, բաղադրիչի կրծատված լինելը, իսկ կախման կետերի միջոցով հեղինակը ընթերցողին նղում է՝ զգալու, ապրելու շղթանորված հույզ, զգացմունք, մտորում»:

բ) Բազմակետը գործածվում է միայն մեջքերվող, իսկ կախման կետերը՝ թե՛ հեղինակային, թե՛ մեջքերվող խոսքում:

գ) Բազմակետի դեպքում կրծատված մասը տվյալ պարագայում ա-

վելորդ է համարվում ընթերցողի համար, իսկ կախման կետերով հեղինակը ոճահարրողակցային նպատակ է հետապնդում:

դ) Բազմակետը հիմնականում գործածվում է գիտական ոճում, մինչդեռ կախման կետերը գործածվում են գերազանցապես գեղարվեստական, հրապարակախոսական ոճերում:

ե) Բազմակետը արտասանական նշանակյալ չունի, իսկ կախման կետերը կիրառույթունների մեջ մասում ունեն, եթե հույզը, մտածումը լրիվ չի արտահայտվում, ասելիքը մնում է առկախ, անավարտ, դա արտաքերվում է որպես նախադասության հնչերանզի, նախադասության կամ նրա որևէ մասի չափարարվածության նշում:

Մենք բերևս երկար կանգ առանք մեկ սխալի տեսակետի վրա՝ ցույց տալու համար, թե ոչ գիտական դիրքորոշումը ինչպիսի սխալների կարող է համագենել տեսական ու գործնական հարցերում: Կետադրության հարցերը լուծելիս պետք է ուղենիշ ունենալ զրաբոր խոսքի հնարավոր առավելագույն համապատասխանության ապահովումը բանավորի հանդեպ, օգնել հեղինակին, գրողին՝ խոսքի տրամարանական, իմաստային, հուզական նրբույթունները առավելագույն հարորդելու ընթերցողին: Սա պետք է նկատի ունենան նաև կետադրություն սովորեցնողն ու սովորողը:



1.

## Տրոհության նշաններ



Տրոհության նշաններն են վերջակետը (:), միջակետը (,), ստորակետը (), բուրը (), փակագծերը (( )), որոնցով նշվում են խոսքի, նախադասության մեջ քերականական արժեք ունեցող տրոհումները, դարձները:

### 1. Վերջակետը դրվում է՝ **Ա. Ինքնուրույն նախադասության վերջում՝ արտահայտելով համեմատաբար մեծ դաշտար նախադասությունների միջև.** Օրինակ՝ Բացվում էր օրը: Գյուղն արքացել էր արևից առաջ: Նոր թխած հացի բուրմանը էր գալիս: Պարզուց լսվեց նորութիմ կանքող մի կովի բատաչ: Մի քահ զրնգաց՝ զարնկելով քարիմ: (Պ. Մեակ) Ծանոթություն 1: Վերջակետ չի դրվում այն նախադասություններից հետո, որոնք չեն կապակցվում խոսքի հետ, գործածվում են անկախ, որպես վերնագիր, պարբերականի, ստեղծագործության, նկարի անվանում, կոչ կամ ունեն տեղեկատու իմաստ: Օրինակ՝ ա) Հավաստում եմ քեզ, Հավաստում եմ քեզ, իմ հայ ժողովուրդ, Քեզ, որ լեռներում այս բարձրիկ ու լորք Ապրել ես դարեր, դարեր մաքատել Եվ քո կրակը միշտ վառ ես պահել... (Վ. Դավթյան) բ) «Երերում է Երևանը» գ) Նկարում՝ դիմավորում են Արցախի ազատամարտիկներին դ) Հաստաված է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից ե) Հրատարակում է 1932 թ. փետրվարի 25-ից Ծանոթություն 2: Վերջակետ չի դրվում նախադասության վերջում գործածված կախման կետերից հետո, որոնք կատարում են նաև վերջակետի դեր: Օրինակ՝ Ի՞նչ իմանա, ի՞նչ կար այդ դահին նրա հոգում չտեսած հայրենիքի կարո՞ս, թե՞ էլի ուրիշ անմըքոնելի կարունեա՛, տենչե՛, մարած ու մարվելի՛ երազնե՛ր... ի՞նչ իմանա... (Ա. Կապուտիկյան) **Բ. Տողասկզբում գործածվող վերմագրից, ծանոթություն, վարժություն, խնդիր, առաջարրանք և նման բառերից կամ նրանց թվահամարից հետո.** 14 15

## Օրինակ՝

ա) **Կատակերգություն:** Կատակերգությունը գրականության բուն երգիծական ժանրերից ամենախոշորն է:

(Գասազիր)

բ) **Ծանոթություն:** Գայլ, տայլ, լալ բայերն ուժվերջափորությամբ անկատար դերքայ չունեն; Դրանց անկատարի փոխարեն գործածվում են գալիս, տալիս, լալիս ձևերը:

(Գասազիր)

գ) **Առաջդրանք:** Վերիշեն բայի և նրա անդեմ ու դիմափոր ձևերի սահմանումները:

(Գասազիր)

դ) **Վարժություն 3:** Տրված գոյականներով ու ածականներով կազմել բառակապակցություններ՝ յուրաքանչյուր գոյականի հետ գործածելով համապատասխան ածական:

(Գասազիր)

**Գ. Սատենագիտական ցանկում, տողատակում մատենագիտական ամեն մի ինքնուրույն հղումից հետո.**

## Օրինակ՝

Գրականություն

Արելյան Մ., Աշխարհաբարի ժուրականություն, Վաղարշապատ, 1906: Արելյան Մ., Հայոց լեզվի ժառանքը, Երևան, 1965:

**Դ. Ուսումնական և այլ հարցեր, թեմաներ ներկայացնող բառերի, բառակապակցությունների միջև, որոնք հաջորդում են իրար.**

## Օրինակ՝

ա) Էլեկտրական դաշտ: Էլեկտրական դաշտի լարվածությունը: Կետային լիցքի դաշտի լարվածությունը: Լարվածության գծեր:

(Ֆիզիկայի դպրոցական ծրագրից)

բ) Բնական թվեր: Պարզ և բաղադրյալ թվեր: Բաժանմարար, բազմաղատիկ: Ընդհանուր բաժանմարարներ: Ընդհանուր ամենափոքր բազմաղատիկ:

(Մարենմատիկայի դպրոցական ծրագրից)

## **2. Միջակետը դրվում է՝**

**Ա. Բարդ համադասական նախադասության այնպիսի համադաս նախադասությունների միջև, որոնք կապված են առանց շաղկապի, ունեն զգալի ինքնուրույնություն և արտասանվում են զգալի դադարով.**

## Օրինակ՝

Դադարեց անձեւը, լուսինը վար նայեց սղիսակ լեռների կապույտ ձորերից, անսառաղաղի աղջիկը բորբոք կրակը (Գ. Մ.):

**Ծանոթություն:**

Այսպիսի դեպքում որոշ դեր կատարում է կառույցի ընկալումը: Բաղադրիչ նախադասությունների առավել նվազ ինքնուրույնության, ուրեմն առավել փոքր դադարով տրոհվելու դեպքում դրանց միջև դրվում է ստորակետ, իսկ առավել մեծ ինքնուրույնության, ուրեմն մեծ դադարով տրոհվելու դեպքում վերջակետ:

## Օրինակ՝

Դադարեց անձեւը, լուսինը վար նայեց սղիսակ լեռների կապույտ ձորերից, անսառաղաղի աղջիկը բորբոք կրակը:

Դադարեց անձեւը: Լուսինը վար նայեց սղիսակ լեռների կապույտ ձորերից: Անսառաղաղի աղջիկը բորբոք կրակը:

**Բ. Առանց շաղկապի կամ շաղկապական բառերի կապակցված այն նախադասությունների միջև, որոնցից մեկը մյուսի բացատրությունը, մեկնաբանությունն է կամ նշանակում է հետևանք, եզրակացություն.**

### *Օրինակ՝*

Հզոր է Ակսենի մեջ բնադրական զգացողությունը. նա աղրում է, զգում է հողը, surtirfը, երայրական մի բարությամբ համակված է դեղի բույսերը, բոշունները, կենդանիները:

(Ակ Իսահակյան)

Ակսեն աղրում է, զգում է հողը, surtirfը. հզոր է նրա մեջ բնադրական զգացողությունը:

Մենք ուսանում ենք. դեմք է տասդել:

Այս կամուրջը հնում վարդեներ են կառուցել. կարող ենք վրասի լինել, որ այն անվտանգ կծառայի սերունդներին:

**Գ. Բարդ համադասական նախադասության այնպիսի համադաս նախադասությունների միջև, որոնցից առաջինը ընդհանուր դատողություն, նկարագրություն է պարունակում, իսկ հաջորդը կամ հաջորդները՝ դրա մասնավորումը կամ մասնավորումները.**

### *Օրինակ՝*

Տարվա ամեն մի եղանակ իր յուրահատուկ ներկապնակն ունի. անտառն աւճանը դեղնակարմիր է դատմում:

Մանկահասակ երեխաները փորձում էին ունեն գործ անել. աղջիկը բակն ու տունն էր ավլում, տղան ջրում էր այզին:

**Դ. Մեջքերվող ուղղակի խոսք ունեցող նախադաս հեղինակային խոսքից հետո.**

### *Օրինակ՝*

Ավելիին Խասհակյանը գրել է. «Երանի՛ նրանց, ովքեր սովորում են և սովորեցնում»:

**Ե. Առավելապես վերնագրերում այն բառերի, բառակապակցությունների միջև, որոնցից մեկն արտահայտում է մյուսի վերաբերյալ կամ նրա կապակցությամբ մասնավորում (հաճախ որպես ենթավերնագիր), ընդհանրացում, լրացուցիչ միտք.**

### *Օրինակ՝*

ա) «Հայանտանի Համալետություն. անկախացման առաջին բայլերը»

բ) «Հայոց լեզու. շարակիություն»

գ) «Երևան, բացվեց հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողովը»

**Զ. Թվարկում նշող թվանշաններից, տառերից հետո.**

### *Օրինակ՝*

Ժողովի օրակարգի հարցերն են՝

1. Երկարեցիների հետ սարվող աշխատանքը.

2. մարզական միջոցառումների նախադատքասման ընթացքը:

Ժողովի օրակարգի հարցերն են՝

ա. Երկարեցիների հետ սարվող աշխատանքը.

բ. մարզական միջոցառումների նախադատքասման ընթացքը:

**Ծանոթություն:**

Եթե թվարկում արտահայտող թվանշաններից կամ տառերից հետո կա փակագիծ, ապա միջակետ չի դրվում:

### *Օրինակ՝*

Ժողովի օրակարգի հարցերն են՝

- Երկարության հետ համապատասխան աշխատանքը.
- Աշխատանքը միջոցառումների նախադաշտական ընթացքը:

Գերազանցական աստիճանը կազմվում է՝

- ածականի դրական աստիճանի ձևին ավելացնելով **ամենա** նախածանցը.
- բ) ածականի դրական աստիճանի ձևին ավելացնելով **ազույն** վերջածանցը:

**Է. Այն թվարկվող միավորների միջև, որոնք արտահայտված են ծավալուն բառակապակցություններով կամ ունեն սոուրականություն նշված ներքին տրոհումները.**

### Օրինակ՝

Մենք տաքերում ենք ստորադասական շաղկապների երկու խումբ՝

- Աշխատակային ուղղվածության շաղկապներ՝
  - մեկնական,
  - բացահայտության.
- օբյեկտային ուղղվածության շաղկապներ՝
  - համեմատության,
  - կախման:

(Գ. Զահորեան)

Հոկտեմբերին՝

- հոդամասի հարեցման ժամանակ վերին բերդի շերտը կույտավորել, հարթեցնել, սկսել դարավագնդավորման աշխատանքները.
- բերել համադաշտախան բանակությանը լիցքի հող, ցանկադաշի համար անհրաժեշտ լարազաներ և տնկանյոթ.
- Տեղաձեւել նախադաշտասկած հոդատարածքը, ձեռնամուխ լինել ծառատանկման աշխատանքներին:

(Զենոնիկի)

### Ծանոթություն 1:

Եթե թվարկվող միավորները ամբողջական նախադասություններ են, ապա դրանցից յուրաքանչյուրից հետո սովորաբար դրվում է վերջակետ:

### Օրինակ՝

Ճեղքության մասին միավորները բանություն կատարում են՝

- Ծառն ունի ուժեղ աճ, ոչ խիս սաղար:
- Պտուղները մասն են կամ միջին մեծության, կլորավուն:
- Պտղամասեկը հարթ է, դիմու, բաց կանաչ գույնի:
- Պտղամիսը սողիսակ է, հյութալի, կոռիթի, բաղցարքված համով:

(Զենոնիկի)

### Ծանոթություն 2:

Կապակցված խորից դրվագ նոր տողից կատարվող սոսկական թվարկումների դեպքում տրոհության մշան չի դրվում:

### Օրինակ՝

Հայաստանի ստեղծագործական միությունները

- Հայաստանի գրողների միություն
- Հայաստանի նկարիչների միություն
- Հայաստանի ճարտարադեսների միություն
- Հայաստանի լրագրողների միություն

Պարզ բառեր

հող  
բար  
ջուր  
մարդ

Բարդ բառեր

դասագիրք  
օդաչու  
հացրուխ  
բառապաշար

**Ը. Անվանում, կոչ, հարցադրում արտահայտող բառերից, բառերի կապակցություններից, ինչպես և նախադասություններից հետո, որոնց հաջորդում է դրանց հետ ուղղակիորեն կապված, դրանց անմիջականորեն վերաբերող կարծիք, գնահատություն, եզրակացություն.**

### **Օրինակ՝**

ա) Միասնություն. ահա այն նշանաբանը, որով նեմի ոլոք է դեկավարվեմ:

բ) Թումանյան, Խահակյան, Տերյան, Վարուժան, Մեծարենց. սրանք են իմ սիրած դասական քանաստղները:

գ) Սիւս նայել առաջ. սա բոլորին դաշտականության է:

դ) Ո՞րն է ելքը. սա է մեր մասհոգությունը:

**Թթ. Կանոններից, սահմանումներից հետո, երբ դրանց անմիջապես հաջորդում է օրինակը՝ առանց օրինակ, ինչպես, այսպես և նման բառերի, ինչպես և ընդհամարկան մտքից հետո, որին հաջորդում է թվարկում, հատկապես եթե գործածված են հետևյալ ներքոհիշյալ և նման բառեր.**

### **Օրինակ՝**

Տեղի սրբազն կարող է արտահայտվել տրական, քացառական, գործիքական, ներզոյական հորվիճություն.

Գրեթե դատավորված են գրաւելիանին: Նշանի վերադասն Արցախից: Ավտոմետնաներ դանում են մայրություն: Դրան ողը սառն է:

Պետք է տարբերել հետևյալ դեպքերը.

ա) Երեխան, արարքը թույլ է սկել անզիտակցարա:

բ) Նա տվյալ բայլը կատարել է նոյատակադրված:

**Ժ. Բառերի կրծատ գրված մասից հետո.**

### **Օրինակ՝**

Պոռֆ. Մ. Արենյանը մեծ գրականագետ ու մեծ լեզվաբան է:

### **Ծանոթություն 1:**

Զափի միավորների անունների կրծատ ձևերը գրվում են առանց կետի, ինչպես՝ մ (մետր), կմ (կիլոմետր), դմ (դեցիմետր), սմ (սանտիմետր), գ (գրամ), կգ (կիլոգրամ), ց (ցենտիմետր), տ (տոննա), լ (լիտր), ր (րոպե), ժ (ժամ) և այլն:

Զափի միավորների կրծատ ձևերը գրծածվում են թվանշանների հետ, իսկ բառերի հետ գրծածվելիս դրանք չեն կրծատվում.

### **Օրինակ՝**

Ավտոմետնան 4 ժ-ում անցավ 240 կմ: Քանի՞ կիլոմետր կանցնի նա 7 ժ-ում, եթե արագությունը մեծանա 5 կմժ-ով:

(Դասագիրք)

Ժամ բառը ժամանակի (ոչ ժամանակային չափի) խաստով գրծածվելիս կարող է կրծատվել, և այդ դեպքում կրծատման տեղում դրվում է միջակետ:

Հավաքը տեղի կունենա ժ. 9-ին:

### **Ծանոթություն 2:**

Երբ կրծատումը կատարվում է բառի ոչ թե վերջից, այլ նրա ներքին ծայնավորների հաշվին, ասպա նրա կրծատ ձևը գրվում է առանց միջակետի: Ինչպես՝ պրմ/պարմ/, մղմ/միղոն/:

### **3. Ստորակետը դրվում է՝**

**Ա. Գերադաս և ստորադաս նախադասությունների միջև.**

### **Օրինակ՝**

Աշակերտներն ակնածանի զգացումով մասն այն տունը, որտեղ ապրել ու ստեղծագործել է մեծ բանաստեղծը:

Ես ճամփա եմ, որ տեղ հասնեմ,  
Որ տեղ հասցնեմ մոլորդպածին (Ա. Զ.)

Այդ օրերին, երբ նա առավոտից մինչև ուժ գիշեր նկարում էր,  
ոչ ոք իրավունք չուներ խանգարել նրան:

### Ծանոթություն:

Եթե ստորադասական շաղկանը գեղշված է, գերադաս և ստորա-  
դաս նախադասությունների տրոհումը սովորաբար կատարվում է բուրով:

### Օրինակ՝

Թվաց՝ երկինքը շողեր է շաղում:

Զգիտունը՝ երբ է տնկված, ոմ ձեռքով (Ակ. Իս.):

Տեսան՝ տանը չի կարողանում ծառայել, խանութ տարան Գիլորին (Հ. Թ.):

Բ. Յամադաս նախադասությունների միջև, երբ սրանք կա-  
պակցված են առանց շաղկապի, հնչածես նաև և-ից, ու-ից, կամ-ից  
բացի որևէ շաղկապով (իսկ, բայց, սպական, մինչեռ և այլն).

### Օրինակ՝

ա) Անշային կիսալրույսով կամաց-կամաց իշխում է մքնաւոր,  
նախիրը տուն է դատում հանդից, վառվում են տեսարի ճագաները (Ակ. Իս.):

բ) Նա մարդկանց չի դատապարտում, այլ սիրում է նրանց:

գ) Աւակերտները երեկ ոլիսի գնային է բակուրսիա, սակայն  
վաս եղանակի դատանոռը է բակուրսիան հետաձգվեց:

Գ. Եվ, ու, կամ շաղկապներով կապակցված համադաս  
նախադասությունների միջև, որոնք յունեն ընդհանուր ենթակա.

### Օրինակ՝

ա) Տեսրում վառվում են ճագաները, և զյուղի վրա բացվում է  
դարգ, առաջազարդ երկինք (Ա. Խ.):

բ) Նրանք վաղոց սղասում են լույսը բացվելուն, և վեցա-  
դաս լուսացավ:

գ) Ամեն օր նոր ու նոր լուսեր են հասնում Արաբի ափի  
գյուղ, կամ հենց այդ գյուղում են հորինվում լուսեր Առաքելի մա-  
սին (Հ. Թ.):

Դ. Նախադասության համադաս անդամների միջև, երբ  
սրանք կապակցված չեն և, ու, կամ շաղկապներով.

### Օրինակ՝

ա) Երկրում ստեղծվեց մի խառնակ, անորու, ամսանելի վիճակ  
(Հ. Թ.):

բ) Ռ-ըսունյաց նախարարը եկել էր որսի՝ բարակներով, ծառանե-  
րով, զինվորներով (Հ. Թ.):

Ե. Միջանկյալ բառերի, բառակապակցությունների, նա-  
խադասությունների և նախադասության հիմնական մասի միջև.

### Օրինակ՝

ա) Ինարկե, նրա նման են չնմ կարող դասմել (Հ. Թ.):

բ) Եվ, սոսկալի բան, կայծակի նման կիզիչ ու արագ մի  
ցնցում անցավ մարմնով (Վրբ. Փ.):

գ) Նույն նտահոգության մեջ է, ինչպես երևում է, նաև հայրը  
(Ա. Զ.):

դ) Նա հանձն շառավ իր սխալները և, այնուամենայնիվ,  
փորձեց ուղիղ դրան:

### Ծանոթություն:

Խոսրի մասերից միջանկյալ կիրառությամբ առավելացնես հան-  
դաս են զայիս ծայնարկությունները, վերաբերականների մի մասը:

### Օրինակ՝

ա) Այս, ինչ երջանիկ կյանք կլինի դա (Հ. Գ.):

թ) Հեյ, բացվեց ք, ամուր փակեր (**Հ. Թ.:**):

զ) Օ՛, այո՛, անգղո մեզ մոտ է արդին,

Իր սկ ստվերը տարածել է տորը Մասսակ փեշերին (**Ա. Ա.:**):

թ) Ո՛չ, մենք չեմ բաժանվի Ծիմշանցից (**Բ. Բ.:**):

Որոշ ծայնարկություններ կարող են իմաստային յուրահատուկ գործածությամբ կապվել այլ բառի հետ և շտրհվել:

### Օրինակ

ա) Այ տղա, եղ ամսեր միջնուները կոտորվեցին (**Հ. Թ.:**):

թ) Ա՞յրեն սառնամանիք է:

զ) Վայ նրան, ով հետ է մնում ժամանակից:

### **Զ. Կոչականի և նախադասության հիմնական մասի միջև.**

### Օրինակ

- Հայրիկ, ինչո՞ւ ես չդարձան

Են քաջերը սիրատեմնչ.

Մի՞քե, հայրիկ, ինձ մոռացան,

Ել չեն քերի հոյրեն անշեց.

(Հ. Թումանյան)

Սեղեանքերի մեկը, սիրելի՛ երեխաներ, կդառնա ձեր կյանքի ամենահիւածան օրերից մեկը:

**Է. Կրկնադիր և...և, թե...թե, կամ...կամ, ոչ...ոչ շաղկապներով կապակցված բառերի, նախադասությունների միջև.**

### Օրինակ

ա) Նա կարգաղահ է ամենուրե՛ք դդրոցում, թե՛ դրսում:

թ) Նրանք որուել են ամռանը հանգստանալ կամ Սևանում, կամ Դիլիջանում, կամ Լոռիում:

զ) Նրան և տեսնում էին ամեն ինչ, և ոչինչ չին հասկանում:

### **Ը. Միջադաս տրոհված դերայական դարձվածից առաջ և հետո.**

### Օրինակ

Նրանք, ավարտելով իրենց աշխատանքը, սկսեցին օգնել ընկերներին:

Աւակերտները վերադարձան ամառային արձակուրդներից և, դրոցի դահլիճում հանդիպելով ուսուցիչների հետ, հուզիչ դահեր սպարեցին:

**Թ. Ըստ, նայած, համապատասխան, համաձայն, հակառակ, հանդերձ և մման կապերով ծնավորված հիմունքի ու զիջման միջադաս պարագաներից առաջ և հետո.**

### Օրինակ

ա) Տամբարում հանգստացողները, ղեկի հատուկ կարգադրության համաձայն, ղիտի մասնակցեն մոտակա ամսառը փասծ ու չորացած ճյուղերից ճաքրելու աշխատանքներին:

թ) Լեռնագնացները, չնայած դժվարին տեղանքին ու անրաւենդաս եղանակին, հաջողությամբ ավարտեցին նախատեսված արշավը:

**Ժ. Բացահայտչից հետո, եթե նախադասությունը շարուակվում է.**

### Օրինակ

ա) Վաղը մենք՝ կանայք, կմեկնենք զավարելով և նոր զնաքերություններ կհավաքենք (Ա. Խ.):

թ) Զնեռային արձակուրդներ՝ հունվարի 1–10-ը, մենք կանցկացնենք Ծաղկաձորում:

զ) Նրան ուղեն մարզիկի, բոլոր բարձ են զնահատում:

### **Ծանոթություն 1:**

Բացահայտչից հետո սսորակես չի դրվում

1. Երբ հատկացոցի բացահայտչին հաջորդում է նրանից տարբեր հոլովով քառ, որը չի կարող շփորվել բացահայտչի հետ:

*Օրինակ՝*

Մեծատաղանդ դեւասանի՝ Վահրամ Փափազյանի արվեստը միշտ հիացմունք է դասձարել բոլորին:

Եթե այդպիսի բացահայտչին հաջորդում է նույն հոլովով դրված քառ, որը կարող է շփորվել բացահայտչի հետ, ապա այդ բյուրիմացույնը կանխիրու համար բացահայտչից հետո դրվում է ստորակետ:

*Օրինակ՝*

Աւոքի՝ ըմկերոջ, որու կազմակերպվածվորյունը հիացրել է բոլորին:

Այստեղ բացահայտիչն է **ըմկերոջ** քառ, իսկ առանց ստորակետի՝ բացահայտչիը կինը **ոդդուն**:

2. Երբ բացահայտչի հետ գործածված է հետարա կապ.

*Օրինակ՝*

Այս ամենը բոլորին՝ ծեզ և մեզ համար կատարվածի միայն մի մասն է: Նա իր մոր՝ ուղեղ առաջին խորհրդատուի հետ էլ խորհրդակցեց:

3. Երբ տրամարանական շեշտը բացահայտչի վրա ընկներու պատճառով ստորոգյալի հանգույցը կամ օժանդակ քայլ դրվում է բացահայտչից հետո.

*Օրինակ՝*

Ժամանակից հայ Երաժշտությունը մեծ կոմղողիուրին՝ Կոմիտասին է դարտական իր զարգացման մի շարժ կողմներով:

Ամուսն՝ ամենաարևո օրերին է նա սիրում նաև դարտեզում:

4. Երբ բացահայտչին հաջորդում է հավելական էլ շաղկապը:

*Օրինակ՝*

Մեր դասարանի ավագը՝ Լիիիրն էլ այդ կարծիքին է:

**Ծանոթություն 2:**

Բացահայտչից հետո ստորակետ չի դրվում, եթե նոյն տեղում պահանջվում է դնել բույ կամ միջակետ:

*Օրինակ՝*

Փողոցում հանդիլեցի դրցական ընկերոջն Արամին գրեթի կապոցը ձեռիքն:

Դրցի բակում տեսան նոր սնօւնին՝ Գրիգոր Գալսյանին՝ ին դրցական ընկերոջը՝ ցցաղաւակած աւակերտելու:

Ամրոց բնամին անհամբեր սպասում է հյուրերին արտասահմանից նոր վերաբերած ազգականներին. գրեթի հինգ տարի իրաւ չին տեսել:

#### **ԺԱ Մելինական բարից առաջարկության մեջ**

*Օրինակ՝*

Արշավախումբն ուղևորվեց դեմի վեցերորդ աշխարհամաս, այն է՝ Անտարկտիդա:

**ԺԲ Մատենագիտական աղբյուրի նկարագրության մեջ ներկայացվող տվյալների միջն.**

*Օրինակ՝*

Ալ. Շիրվանզադե, Երևանի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1951, էջ 421:

#### **4. Բութը դրվում է՝**

**Ա. Բացահայտյալի վրա՝ բացահայտչից անջատելու համար.**

*Օրինակ՝*

ա) Մեմ՝ Երիտասարդներ, լավ գիտեմ մեր դարտականություններն ու իրավունքները:

թ) Անդուն էր միայն բերդի բագրուին՝ Փառանձնեմը (P):

գ) Հանդիպումը տեղի կունենա մարտի 1-ին՝ կիրակի օրը:

դ) Հանրահավաքը տեղի ունեցավ Երևանում՝ Ազատության հրապարակում:

ե) Հակոբին՝ որդես մասնագետի, բոլոր հարգում են:

### Ծանոթություն:

Եթե մասնական բացահայտիչը գործածվում է նախադաս, բոլոր դրվում է նրա վրա:

Որդես մասնագետի՝ Հակոբին բոլորը հարգում են:

**Բ. Նախադաս և հետադաս տրոհված դերբայական դարձվածների և նախադասության հիմնական մասի միջև.**

Նախադաս դերբայական դարձվածի տրոհման այս կանոնը վերաբերում է նաև այն դեպքերին, եթե դերբայական դարձվածը հաջորդում է շարկապին:

### Օրինակ՝

ա) Հաջորդությամբ ավարտելով օրվա աշխատանքը՝ նրանք գոհ վերադասն տուն:

բ) Մեր դպրոցն ամեն ինչ անում է՝ հաղթելու առաջիկա մրցումներում:

գ) Նրանք վերջապես հասկացան, որ իրենց քոյլ տված սխալները համառորեն չընդունելով՝ կկանգնեն փակութու առջև:

### Ծանոթություն 1:

Բարդ նախադասության մեջ դերբայական դարձվածի շարադասությունը որոշվում է ամեն մի բաղադրիչ նախադասության մեջ՝ առանձին վերցրած:

### Օրինակ՝

Նա գարմացավ՝ այդ օյուղում հանդիպելով իր իին ընկերոջը և սկսեց մանրամասն հարցուվոր անել: (Խաղաս)

Գարնան արևի ջերմությունից բողոքները սկսել են բացվել, կիսահայ ձյան շերտը ճեղմելով՝ իրենց գլխիկներն են բարձրացնում ձնծաղիկները: (Խախադաս)

### Ծանոթություն 2:

Միջադաս տրոհված դերբայական դարձվածը նախադասության մյուս անդամներից բաժանվում է ստորակետերով:

### Օրինակ՝

Նրանք, հաջորդությամբ ավարտելով օրվա աշխատանքը, գոհ վերադասն տուն:

Սխալ է «Նրանք հաջորդությամբ ավարտելով օրվա աշխատանքը՝ գոհ վերադասն տուն» տարրերակը. ներական չի կարող մտնել դերբայական դարձվածի մեջ:

### Ծանոթություն 3:

Ծաղկապին հաջորդող նախադաս դերբայական դարձվածը, որը տրոհվում է բուրով, կարելի է տրոհել նաև ստորակետերով:

### Օրինակ՝

Նրանք վերջապես հասկացան, որ, իրենց քոյլ տված սխալները համառորեն չընդունելով, կկանգնեն փակութու առջև:

**Գ. Ըստ, նայած, համապատասխան, համաձայն, հակառակ, հանդերձ, չիաշված և նման կապերով ճնավորված նախադաս ու հետադաս տրոհված հիմունքի ու գիշման պարագաների և նախադասության մյուս անդամների միջև.**

## Օրինակ՝

ա) Ըստ դպրոցի Տնօրինի կարգադրության՝ մեր ամսառային արձակուրդի մի մասը դեմք է համարվելու դաշտային աշխատանքներին:

բ) Հնայած վատառողջությամբ՝ նաև գալիս է աշխատանքի:

գ) Հակառակ իր հայացքներին՝ Սմբատը համաձայնություն էր սկզբ:

դ) Նա գալիս է աշխատանքի՝ շնայած վատառողջությամբ:

ե) Սմբատը համաձայնություն էր սկզբ՝ հակառակ իր հայացքներին:

### **Ծանոթություն:**

Նշված պարագաները միջադաս գործածության դեպքում նախադասության մյուս անդամներից բաժնակում են աստրակետով:

## Օրինակ՝

ա) Նա, շնայած վատառողջությամբ, գալիս է աշխատանքի:

բ) Սմբատը, հակառակ իր հայացքներին, համաձայնություն է սկզբ:

**Գ. Անորոշ առումով թվարկված հետադաս բազմակի ենթականներից առաջ.**

## Օրինակ՝

ա) Հայաստանի Հանրապետության մեծ քաղաքներն են՝ Երևան, Գյումրի, Վանաձոր:

բ) Նրա դասանած սկզբունքներն են՝ ազատություն, արտադրություն, նադասիրություն:

**Ե. Թվարկմանը նախորդող բարի վրա, եթե թվարկմանը նախորդում է բար կամ բառակապակցություն կամ թվարկվող միավորները բարեր կամ բառակապակցություններ են.**

## Օրինակ՝

ա) Հայ դպրոցի ընկերության համագումարը

1) որուստ է ընկերության գործունեության հիմնական ուղղությունները.

2) հաստատմ է ընկերության կանոնադրությունը, անհրաժեշտ վոփոխություններ և լրացումներ մացնում ենա մեջ.

3) ընսրում է ընկերության կենտրոնական վաշչություն և կենտրոնական վերաբերյալ հանձնաժողով:

բ) Հայ դպրոցի ընկերության համագումարը որուեց:

1) ընկերության գործունեության հիմնական ուղղությունները.

2) ընկերության վաշչության կազմը.

3) ընկերության ենթական մարմինների ընտրության կազմը:

### **Ծանոթություն:**

Թվարկմանը նախորդող բարի հետո դրվում է միջակետ, եթե թվարկմանը նախորդում է նախադասություն, և թվարկվող միավորները նախադասություններ են:

## Օրինակ՝

Անձնանունների ցանկը կազմելիս հիմք են ընդունվել հետևյալ ընդհանուր սկզբունքները:

1. Ժամանակակից հայերենի անձնանունները ուստերեն արտահայտում են ոչ թե գրադարձությամբ, այլ տառադարձության սկզբունքով:

2. Հայերենի այն հնչույթները, որոնք չունեն ուստերեն համարժեներ, տառադարձում են նրանց ըստ հնարավորին առավել մոտ հնչույթներ արտահայտող տառերով:

3. Հայերեն անձնանունները ուստերեն տառադարձնեին նկատի են առնվում ուստերենի գրության և ուղղագրության կանոններով պայմանավորված սահմանափակումները:

**Զ. Նախադասության մեջ իրար հետ չկապվող, բայց իրար հաջորդող կամ իրար մոտիկ գտնվող բառերից առաջինի վրա՝ դաժ իմաստային շփոթումը կանխելու համար.**

## Opportunities

Դանդաղ ու աննկատելի՝ այգեստանը վերածվում էր զյուիք:  
Պատահական չէ,որ նոր՝ Օօսական զյուդում գտնվող համեստ  
շիրիմն այսօր էլ հայ ժողովորի սրբություն սրբոցն է (Պ. Էմին):

**Ե. Թվարկում արտահայտող նախ, ապա, առաջին, երկրորդ, չորրորդ, և նման այլ բառերի վրա.**

## Opposite

Մեր դաստիարակությունների մեջ դեռ են կատարում աշխարհական պատճեններ. նախ՝ մենք լավ ենք գիտակցում և կատարում մեր դաստիարակությունները, աղջ՝ մենք սովորություն ունենք իրաւունք և անառ մեր դիտարկություններով, ինչն որ դրա կարիքը լինում է:

**Ը. Մեկնական** այսպես, այսպիսով, այն է, այսինքն, որոնք են, որինակ և նման բառերի վրա.

## Opportunity

ա) Գործարանում շատ բան է արկում վերակառուցման ուղղությամբ: Օրինակ՝ *հիշեց* է կազմակերպվում արտադրությանը, հասուն հսկողություն է սահմանված արտադրական ցուցանիւթերի վրա:

Ը) Առեղծված է մեր պիտը, այսինքն՝ մեր զգացմունքների մեջ ու խորության աշխարհը (*Ակ Իս*):

### **Διαδικασίες 1:**

Մեկնական բարից առաջ նոյն նախադասության մեջ սովորաբար ողևոն է ստորագիտ:

## *Oppressor*

Արշավախումբն ուղևորվեց դեռի վեցերորդ աշխարհամաս, այն է՝ արկտիզա:

## **δωματική ρύθμιση 2:**

**Այսպիսով ուրեմն, օրինակ և մատան մեկնական բառերը միջադաս գործածության դեպքում ընկալվում են որպես միջանկյալ բառեր և առնվում են ստորագիտերի մեջ:**

## *Opium*

- ա) Բոլոր ելույթ տնեցողները, այսդիմասկ, հանգեցին նույն եզրակացությանը:

բ) Մեր դասարանը, օրինակ, այս տարի լավ նախաձեռնություններ է հանդիսանում:

**Թ. Նախադասության գեղշված անդամի կամ գեղշված բառի փոխարեն.**

## Oppression

- ա) Մենք աշխատում եինք դպրոցամերձ հոդամասում, նրանից  
արհեստանոցում:

բ) Անակիսն ուսանողունի է, իսկ Լիլիթը՝ աշակերտունի:

զ) Ամեն տեղ առաջինն է, քննելիս՝ վերջինը,  
Սարմնացած ջանք է նա կարծես,  
Մի ժեռքը՝ չիրովսին, մի ժեռքը մաճին է...  
Նկարիչ, կանչում է նա մեզ:

գ) Գնացքից հօած ուղևորը քայլեց դեպի կայարանի շենքը՝ ճախ ձեռքին բռնած մի ճամպրուկ, աշ ձեռքին՝ մի մեծ պայտասակ:

**Ժ. Վերնագրային և անկախ գործաժություն ունեցող այլ արտահայտություններում գեղշված բարի փոխարեն.**

### Օրինակ՝

ա) Աշակեութի զարգացման՝ մեծ ուշադրություն:

բ) Խոաչատուր Արքվանը՝ հայ նոր գրականության հիմնադիր:

**ԺԱ. Շատ հակիրծ, առավելապես մեկ բառով արտահայտված մեջբերվող ուղղակի խոսքից առաջ, եթե այն գրվում է առանց չակերտման:**

### Օրինակ՝

Միրտք կարողով կանչում է քեզ եկ (Վ. Տ.):

Արամն ասում էր՝ մնա՛, քայլ ես չկարողաց կատարել նրա խնդրանիք:

**ԺԲ. Կապակցված խոսքից դուրս գործածվող տեղեկատու արտահայտություններում տեղեկութ պահանջող բարի կամ բառակապակցության վրա.**

### Օրինակ՝

ա) Տիուեն՝ Ս. Հովհաննեսին

բ) Խորագիր՝ Ա. Գևորգյան

գ) Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Գասպարյան

դ) Գործ՝ Մ. Սարյանի

ե) Նկարում՝ Երևանի մարզահամերգային համալիրը

զ) Սկիզբը՝ ժամը 20-ին

է) Մուտքը՝ բակի կողմից

**ԺԳ. Վերջադաս նպատակի պարագայից առաջ, եթե այն անմիջաբար չի հաջորդում ստորոգային.**

### Օրինակ՝

ա) Սոսակույան գյուղի հարսները գնում էին աղբյուրը՝ ջրի:  
բ) Ուշ երեկոյան գորախմբի հրամանատարները հավաքվեցին իշխանի վրանում ամրոցի գրոհը նախապատրաստելու համար:

### Ծանոթություն:

Եթե վերջադաս նպատակի պարագան տրահան հոգովով դրված անորոշ դերքայով (առանց կապի) դերբայական դարձված է, ապա տրոհվում է՝ անկախ վերը նշված հաճախանքը:

### Օրինակ՝

Արվեստի նշանակող գործիչներ և բազմաթիվ արվեստագետներ էին հավաքվել՝ նշելու մեծ նկարչի հորելիքանը:

## 5. Փակագծերի մեջ են առնվում՝

Տեղեկատու, մնականական իմաստ արտահայտող ներդրյալ քառերը, բառերի կապակցությունները, նախադասությունները, որպես նմուշ բերվող նշանները.

### Օրինակ՝

ա) Ավետիք Իսահակյանը ծնվել է 1875 թ. հոկտեմբերի 30-ին Ալեքսանդրապոլս (այժմ՝ Գյումրի):

բ) Բաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան) հայ դատամավիրասանությունը բարձրացրեց նոր աստիճանի:

գ) Երևան է, որ ուրեմն հանել է, գետն անցել (հավանաբար սպանված բաղինը հավաքելու համար) ու մինչև հագնելը սառել (Վ. Ա.):

դ) Եվ անկարող եմ նաև բրդալ (բրդիցի համար ուժ է հարկավոր) (Պ. Ա.):

ե) Այդ թեման մեծ ուժով հնչեց Թումանյանի «Իմ երգ» (1916 թ.) բանասեղծության մեջ:

զ) Կախման կետերը (...) դեմք է տարբերել բազմակետից (...):

## Բացահայտության նշաններ



**Բացահայտության նշաններն են չափերտները («»), միության գծիկը (-), անզատման գիծը (—), կախման կետերը (...), բազմակետը (....), ենթադաշտը (~), ապարացը (•), որոնք նպաստում են նախադասությունների նորի, բառերի իմաստների, բաղադրիչների հարաբերության միջև ընկալվմանը:**

### 1. Չափերների մեջ են՝ առնվազ

#### **Ա. Մեջբերվող ուղղակի խոսքը.**

#### **Օրինակ՝**

- ա) Խահակյան ասել է . «Մարտիրոս Սարյանի արվեսը բրովանդակ աշխարհինն է, սիրելի բոլորին»;
- բ) Դուրյանը մեզ իր օրինակով մերժացրեց այդ «մելամաղձու լճակ»-ին, ինչողև նաև սովորեց «գրավիլ, լուել ու խոկալ» (Պ. Ա.):

#### **Ծանոթություն 1:**

Սեղբերվող են դիտվում նաև այնպիսի նախադասությունները, որոնք թեև իրավանում ասված չեն, բայց հեղինակը վերագրում է որևէ մեկն ընդհանրապես կամ տվյալ պահին նրա համար դրանք համարելով բնորոշ:

#### **Օրինակ՝**

Նրա (Թիֆ. – Բ. Ներսիսյան՝ «Իմ սիրը լեռներմ է» ոիեսում)

ողափածքն ու բայլփածքը, նրա շարժուծն ու ծայնի ելեկները, նրա ամրող վարքագիծը ոիսի, վերջիվեջո, նի բան ասեն. «Փողը դեռ ամեն բան չէ»:

Նա ծնվել է, սառադելով ապրում է, որդեսքի հաստաքի, որ «երգերն էլ են կարևոր»: Այնինչ նրա վերջին ժղիսի բարգմանությունը կարող է նշանակել մի հակառամարանական բան՝ այն, որ «փողը ոչինչ է», «էսկանը հացը չէ»:

(Պ. Սևակ)

#### **Ծանոթություն 2:**

Եթե պահպանվում է մեջբերվող խոսքի հարաբերական ինքնուրույնությունը, ապա այն սկսվում է մեծատառով, իսկ եթե մեջբերվող խոսքը քերականորեն ծովվում է հեղինակային խոսքի մեջ, սկսվում է փոքրատառով, ինչպես երևում է քերված վերջին երեք օրինակներից:

**Բ. Գրական երկերի, գիտական աշխատությունների, հոդվածների վերնագրերը, արվեստի ստեղծագործությունների, թերթերի, հանդեսների անունները խոսքում մեջբերվելին.**

#### **Օրինակ՝**

Նա մեծ ոգևորությամբ արտասանեց և. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» շնաղ բանասեղծությունը: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Գարուն» հանդես, «Հայոց լեզու» դասագիր, Երվանդ Քոչարի «Սաստինի Դավիթ» արձանը, Գրիգոր Խանջյանի «Հայոց այրութեն» սեղծագործությունը:

#### **Ծանոթություն:**

Մատենագիտական ցանկերում, տողատակերում, ներդրյալ հղումներում գեղարվեստական երկերի, գիտական աշխատությունների, հոդվածների վերնագրերը բերվում են առանց չափերտների:

## Օրինակ

ա) Դ. Դեմիրճյան, Վարդանան, Ա, Երևան, 1955:

բ) Մարտկային գրի խորհուրդը բննող.... մոնումենտալ դրական հերոս է Օհան ամին (Ավ. Խաչիակյան, Համբերանի շրույթը):

Այս նույն պարագաներում չակերտների մեջ են առնվում ամսագրերի, հանդեսների, լրագրերի, այլ պարբերականների անունները և այն աշխատությունների, զրբերի վերնագրերը, որոնք հիշատակվում են առանց հեղինակի անվան:

## Օրինակ

ա) «Նոր», 1990, հ. 5:

բ) «Ավանարդ», 1986, հ. 21:

գ) «Հայոց լեզուն և գրականությունը դրուցում», 1988, հ. 5, էջ 42:

դ) Այդուն են մասնավորաբեն թեմայակերները, ծաղիկների և բարդիների, անտառի նամակների գրված երգերը («Երեք բարդի», «Կարմիր կակաչ», «Հովվերգություն», «Գարնան անձրև է խօսում», «Սերգեյ Եսենինին» և այլն):

(Զեռնարկ)

**Գ. Ընկերություններին, հիմնարկներին, ծերնարկություններին տրվող պայմանական անունները, սարքերի, մեթենաների մակնիշները:**

## Օրինակ

«Լոյս» իրատակչություն, «Ան» իյուրանոց, «Մասիս» գործարան, «Երևան» կինոթատրոն, «Վոլգա» ավտոմեթենա, «Արագած» սառնարան, «Սոյուզ - 6» ժեեգերանավ:

**Դ. Նեգմական, ժխտական իմաստով գործածված բառերը, արտահայտությունները.**

## Օրինակ

ա) Բանտարկյալներիս մի կարծեղական հանում էին բանիք բարձր դարչնությունով դատավայրը «զրուանքի» (Ավ. Խո.):

բ) Նա շահ «համես» է, ամբողջ օրն իր զովքն է անում;

գ) Այդ «աննեղ գատից» հարկավոր է մի քիչ զգոյն լինել:

**Ե. Բառը, լեզվական միավորը, որը հիշատակվում է խոսքում, և նրա մասին որևէ բան է ասվում.**

ա) «Հայրենի» բառը ծագում է «հայ» և ոչ թե «հայր» արմասից (Պ. Ա.):

բ) «Վարկարեկել» բառը կազմված է «վարկ» և «քեկել» բաղադրիչներից:

գ) «Լուսացավ», «Անձեռում է» նախադասություններն անենական են:

## **Ծանոթություն:**

Նույն պարագայում վկայվող բառի, միավորի, առանձնացումը կարող է կատարվել նաև ընդգծումով, բռն շարվածքից տարբեր տառապեսակով, մասնավորապես շղատառով:

## **Ամուշ**

ա) Հայրենի բառը ծագում է հայ և ոչ թե հայր արմասից:

բ) Վարկարեկել բառը կազմված է վարկ և քեկել բաղադրիչներից:

գ) Լուսացավ Անձեռում է նախադասություններն անենական են:

## **2. Միության գծիկով գրվում են՝**

**Ա. Նույն բառի կրկնությամբ (անհնչյունափոխ կամ հնչյունափոխված) կազմված բարդ բառերը. զույգ-զույգ, արագ-արագ, կամաց-կամաց, մեկ-մեկ, ուշ-ուշ, մանր-մունք, ոլոր-մոլոր, պարապարապ և այլն:**

## Ծանոթություն 1:

Այս կրկնավոր բարդ բառերը, որոնց բաղադրիչներից մեկը բարացած քերականական ձև է, գրվում են առանց գծիկի՝ միասին. գննուուն, գյուղեզյուք, բերներերան, բարեցդրադի և այլն:

## Ծանոթություն 2:

Կրկնությամբ կազմված այն կապակցությունները, որոնց թերփած բաղադրիչի հողովական խմաստը գիտակցվում է, գրվում են առանց գծիկի՝ անջատ. բաղադրից բազաք, գյուղից գյուղ երկրից երեկից, չեղք յեռքի և այլն:

**Բ.** Միևնույն խոսքի մասին պատկանող բառերի այն միացությունները, որոնք, առարկան, անձը, իրը, երևոյթը բնութագրելով կամ ներկայացնելով տարբեր կողմերից, արտահայտում են մեկ հասկացություն կամ հանդես են գալիս որպես մեկ անուն.

## Օրինակ՝

ա) Խճեներ-մեխանիկ, տուն-քանօգարան, վագոն-ռեսուրսն, հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք, կիլովատ-ժամ, լիտր-վայրէլյան, մեթենօ-օր,

բ) ասել-խոսել, ուտել-խմել, գնալ-զալ, լինել-չլինել,

գ) Սալիշկով-Ծննդին, Դուրյան-Արմենյան, Էլզաս-Լորարինգիա,

դ) աշակերտ-աշակերտուիկ, ուսանող-ուսանողուիկ, ուսուցչ-ուսուցչուիկ, բանվոր-բանվորուիկ,

ե) ազգային-ազգաւագրական, հասարակական-քաղաքական:

**Գ.** Բառերի այնպիսի միացությունները (առաջին բառի վերջածանցի կրծատումով), որոնք արտահայտում են տարբեր կողմերի (լեզուների, ժողովուրդների, պետությունների) հարաբերություններ.

## Օրինակ՝

- ա) հայ-ռուսերեն, ֆրանս-գերմաներեն, ռուս-լատիներեն,
- բ) հայ-վրացական, հայ-իտալական, ռուս-գերմանական,
- գ) գերմանա-իտալական, եզիդա-սիրիական և այլն:

## Ծանոթություն 1:

Հեղվագրական, ֆիզիկամաթեմատիկական, պարմասշխարհագրական, դրամաիրային, Այուրագիսնիկական, ռազմածովային, բառաքրականական, ուսումնադասդիարակչական, աղեսդրամուսային և նման կազմությամբ մեկ միամանական գաղափար արտահայտող բառերի բաղադրիչները, որոնցից առաջինն վերջածանցը լիիվ կամ մասամբ ընկել է, գրվում են առանց գծիկի՝ միասին:

## Ծանոթություն 2:

Այն կապակցությունները, որոնց առաջին բաղադրիչն արտահայտված է որոշիչի դեր կատարող ածականով կամ գոյականով, գրվում են առանց գծիկի՝ անջատ:

## Օրինակ՝

ա) ալ կարմիր, բաց գեղին, բաց կապուտ, մուգ կարմիր,

բ) Նոր Զելանդիա, Նոր Նախիջևան, Մեծ Պարմի, Վերին Թային, Հեռավոր Արևելյան, Փոքր Ասիա:

Այսուղե նշված տեղանուններից կազմված ածականները և գոյականները գրվում են միասին:

## Օրինակ՝

Նորզելանդական, հեռավորաբելյան, փոքրասիական, մեծպարմեցի, վերինթայնցի և այլն:

### **Ծանոթություն 3:**

Անձի անվան և նրա գործունեությունն այս կամ այն առումով բացահայտող գոյականի կապակցությունը գրվում է առանց գծիկի՝ անջատ:

**Օրինակ**

Թումանյան քննադատը, Շիրվանզադե՝ դրամատուրգը, Բաֆֆի վիպասանը:

**Դ. Որևէ անունից (կամ ազգանունից) և տեր, մելիք, միրզա ու նման բաղադրիչներից կազմված անձնանունները (կամ ազգանունները), երբ մշկած բաղադրիչներն արտասանվում են առանձին. օրինակ՝ Տեր-Գաբրիելյան, Մելիք-Մուսյան, Միրզա-Վլագյան և այլն:**

### **Ծանոթություն 1:**

Նշված բաղադրիչներն անձնանվան (կամ ազգանվան) մյուս բաղադրիչների հետ միասին արտասանվելու դեպքում գրվում են առանց գծիկի՝ միասին:

**Օրինակ**

**Մելիքսեր (յան), Բեկնազարյան, Միրզախանյան, Միրզաբեկյան և այլն:**

### **Ծանոթություն 2:**

**Տեր, մելիք և նման բառերը հատուկ անվան հետ որպես որոշիչ գործածվելիս գրվում են առանձին.**

**Օրինակ**

**Տեր Սահակ, մելիք Ավան և այլն:**

**Ե. Ինչ դերանունով բաղադրված անորոշ իմաստ արտահայտող բառերը՝ ինչ-որ, փոքր-ինչ, դույզն-ինչ:**

**Զ. Ավանդաբար գժիկով գրվող հատուկ անունները՝ Նար-Դոս, Գամառ-Քաթիպա, Սայաթ-Նովա, Խնկո-Ապեր և այլն:**

### **Ծանոթություն 1:**

Առանց գծիկի, անջատ են գրվում երկու կամ ավելի առանձին բաղադրիչներից կազմված հետևյալ օտարազգի հատուկ անունները՝

**ա) արևմտյան դա, դը, վաճ, ֆոն, սենյա և նման այլ բաղադրիչներ ունեցող անձնանունները. օրինակ՝ Լեռնարդը դա Վինչի, Լյուդվիգ վան Բերիովին, Անդրուն դը սենյա Էրզյուպերի, Վիլհելմ ֆոն Հումբոլդտ,**

**բ) արևելյան այ էի, էդ, էն և նման այլ բաղադրիչներ ունեցող անունները. օրինակ՝ Հարուն ալ Ռաշիդ, Նահր էլ Բարիդ «Ալ Միրամ» թերը,**

**գ) որոշիչ ու որոշյալի կապակցությամբ արտահայտված օտարազգի բաղադրյալ տեղանունները. օրինակ՝ Նյու Յորք, Նյու Ջերսի, Նիժնի Տագիլ և այլն:**

### **Ծանոթություն 2:**

**Փոխ, էրս, օրիր բաղադրիչներով կազմված բառերը գրվում են առանց գծիկի՝ միասին:**

**Օրինակ**

**Փոխգնդապետ, փոխնախագահ, փոխստվակայ, փոխարքա, էրսչիմպիոն, օրիրլեյլինանյի և այլն:**

**Է.** թվականների այն կապակցությունները, որոնք արտահայտում են մոտավորության իմաստ.

### Օրինակ՝

Տասը-տասնհինգ (10-15) մարդ, չորս-հինգ (4-5) օր, քսան-քսանհինգ (20-25) տարի, ինը-տասը (9-10) տարեկան և այլն:

### Ծանոթություն:

Թվականների այն կապակցությունը, որի առաջին բաղադրիչն ունի բացառական իմաստ, զբարձր է:

ա) անջատման գծով, եթե արտահայտված է թվանշաններով, որոնցից առաջինը բացառական իմաստ է արտահայտում:

### Օրինակ՝

Էջ 10-15, I-IV դասարաններ, I-VIII հաստիքներ, V-XI դարեր,  
բ) առանձին, եթե արտահայտված է բաներով.

### Օրինակ՝

Առաջինց չորրորդ դասարաններ, դասից դասմանին էջերը, ինչպիսից դասմանկերորդ դարեր, առաջինց ութերորդ հաստիքներ:

**Ը.** Այն թերականական ժեւերը, որոնց հիմքերը գրված են թվանշաններով, տառային, վանկատառային հապավումներ են, ինքնանգամող փոխանուններ կամ չակերտների մեջ առնկած վերնագրեր.

### Օրինակ՝

ա) 3-ից, 5-ից, X-ի, XV-ից, 15-ամյա, 100-ամյակ, 2-րդ, 8-ական.

բ) ԱՄՆ-ն, ՄԱԿ-ում, ԱՊՀ-ից, ՀՀ-ի.

գ) Հինգ-ը թվական է; Գարուն-ը երկանկ քառ է; Երգ-ը գրվում է գ-ով, քայլ կարդացվում է բ-ով:

դ) «Անյունում է»-ն միակազմ նախադասություն է: **Երե-ից** առաջ սուրակետ դիր: **Սովորեցից-ն** սխալ ձև է, ճիշճն է: **Ան-** **պեցրի-ն:**

է) Սիրված բանաստեղծությունների ասմոնքի մրցույթն սկսվեց Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»-ով:

### Ծանոթություն:

Ինքնուրույն քաղի վերածված հապավումներով կազմությունները գրվում են առանց գծիկի՝ միասին:

### Օրինակ՝

Բուհի, բուհական, բուհեր, զագուի, զագուով և այլն:

**Թ.** Տառերով արտահայտված պայմանանիշերի, այլև բառերի և նրանց հետ գործածվող թվանշանների կապակցությունները.

### Օրինակ՝

Ա-93 բենզին, S01-104 ինքնարիո, »Զվարթնոց-2« օդանավակայան և այլն:

### 3. Անջատման գիծը դրվում է

**Ա** Երկխոսության ամեն մի մասի սկզբում, որն սկսվում է նոր տողից. մեջբերվող ուղղակի խոսքի և հեղինակային խոսքի միջև նույն նախադասության մեջ դրվում է ստորակետ ու գիծ.

### Օրինակ՝

— Ինչո՞ւ լուս ես, — հարցրեց նա:—  
— Հայր Զիովաննի, սիրո՞՞ն ես դու Գարիբալդիին:  
— Օ՛, ինչե՞ր ես ասում, բարեկա՞մ, — զարմացած հնչեց նրա ծայնը, — մարդ էլ չսիրի՞ Գարիբալդիին:

(Ավ. Իսահակյան)

## **Ծանոթություն 1:**

Եթե հեղինակային խոսքից հետո շարունակվում է մեջքերվող խոսք ինքնուրույն նախադասությամբ, այս վերջինից առաջ դրվում է անջատման գիծ, որին նախորդում է ավարտված նախադասության վերջակետը:

*Օրինակ՝*

- Սիրեցե՛ք գիրք և տա՛ս կարդացե՛ք, — խորհուրդ սկսեց ուսուցիչը:
- Մարդ, իհարկե, սովորում է ամբողջ կյանքում, քայլ դպրոցում ձեռք բերած քացառիկ ու որոշիչ դեր ունի մարդու համար:

## **Ծանոթություն 2:**

Եթե հեղինակային խոսքին նախորդող և հաջորդող մեջքերվող նախադասությունները լրիվ անկախ չեն, քայլ ունեն զգալի ինքնուրույնություն, հեղինակային խոսքին հաջորդող անջատման գծից առաջ դրվում է միջակետ:

*Օրինակ՝*

- Մենք սիրում ենք մեր հայրենիքը, — ասացին աշակերտները. — այն մեզ համար ամենանվիշտական քանն է աշխարհում:

## **Ծանոթություն 3:**

Անջատման գիծը գեղարվեստական խոսքում կարող է դրվել նաև այն ուղղակի խոսքից առաջ, որ երկխոսության մաս չի կազմում:

*Օրինակ՝*

- a) Եկավ դերվիչը, արձանացավ սփիճքի առջև....և ասաց.
- Եկել եմ մոտք համայն աշխարհի բոլոր ժայռերից. բոլոր ժայռերից

հարցումն եմ արել իմանալու, թե ինչ է երջանկությունը, որն է մար իմաստը... և մնացել եմ անոյատասխան:

(Ավ Իսահակյան)

թ) Նա ամեն առավես զարթնելիս և ամեն երեկո բուն նսնելիս կրկնում էր. — Ես բախտավոր եմ, ես ապրում եմ հիմա (Ավ Իս.):

**Բ. Խոսողի անվան և նրա խոսքի միջև (Թատերական ստեղծագործություններում, Երկխոսություններում).**

*Օրինակ՝*

ԲԱԳՐԱՏ — Երեկ դր այդունք չէիր խոսում:

ԱՆԴՐԵԱՍ — Երեկը երեկ էր, այսօր՝ այսօր:

(Չիրվանզադե)

**Գ. Բառերի բացատրություններում՝ բացատրվող բառի և բացատրության միջև.**

*Օրինակ՝*

Ինտելյայս — ոչի կանգնած

բույր — գույն, երանգ

բղանց — հազուսի ներքի մասը, փետք

**Դ. Բառերի (թվերի) միջև, որոնցից առաջինը ցույց է տալիս սկիզբ, սկզբնակետ (ունենալով բացառականի իմաստ), հաջորդը՝ վերջ, վերջնակետ.**

*Օրինակ՝*

Երևան — Վանաձոր երրուսի

Ծագրեր IV–X դասաւանների համար

Հանրախանությ բաց է ժամը 10 –21-ը

**Ե. Թվարկումով ներկայացվող այնպիսի բառերի, բառակապակցությունների միջև, որոնցից հաջորդը նախորդի վերաբե-**

րյալ տալիս է որևէ տեղեկույթ՝ արտահայտելով տարբեր հարաբերություններ (գործող անձ և քառութագիր, դեր և դերասան, հեղինակ և ստեղծագործություն և այլն).

## Օրինակ՝

- ա) Զասդեմ Մեֆ-Գրեգոր – լեհներով հափշտակված մարդ  
Պարոն Կոսակ – նողարավաճառ
- բ) Զասդեմ Մեֆ-Գրեգոր – Հրաշյա Ներսիսյան  
Պարոն Կոսակ – Միհեր Մկրտչյան
- գ) Անգիր սովորել  
Հովհաննես Թումանյան – «Հին օրինություն»  
Ավետիք Խասհակյան – «Արագածին»  
Հանն Սահյան – «Հայոց լեզու»

**4. Կախման կետերը** (երեք կետ) գործածվում են այնպիսի նախադասության մեջ, որը լրիվ չի արտահայտում խստողի ասելիքը, և նա ուզում է հատկապես նշել չըրսնորված հույզ, զգացմունք: Կախման կետերը կարող են դրվել նախադասության վերջում, մեջտեղում, սկզբում՝ պայմանավորված նրանով, թե շարտահայտված հույզը նախադասության հատկապես ո՞ր մասի հետ է կապվում.

## Օրինակ՝

- ա) – Դուք ճա՞մ եք...  
– Այո՛, ճա եմ... Զարմանում եմ, որ չճանաչեցիք:  
– Այս, ժամ եք փոխվել... միայն աշխարհ... այո՛, ճայնն եմ:

(Ա. Բակունից)

բ)

## ՀՐԱՅՐ

Եվ այսքան հրաշք տեսնելուց հետո  
Ինձ համար դարձյալ հրաշքը վերին  
Տար հողի միջով քարիկ քայլելու  
Այն վաղմնական երանությունն է...

(Վ. Գուգյան)

**5. Քազմակերպ** (չորս կետ կամ ավելի) գործածվում է մեջքերումներում և դրվում է մեջքերման կրծատված մասի տեղում.

## Օրինակ՝

....Վարդավառի տոներին իմ բարեկամներից մեկը հրավիրել էր ինձ գնակ իր հետ միասին Դիզափայս, որ բավականին նշանաւոր և հայտնի ոլիսավայր էր.... Երկարաւա ամեարժությունից հետո տեսնել կրկին անգամ Լարաբաղի գեղեցիկ տեսարանները, հարուս ու վայրենի բնուրյունը, մննել գյուղական ուարգ նահապետական կյանքի մեջ, այս ամենն այմբան հրապուրում էր ինձ, որ ես ըստեցի մի բանի օր առաջ.... դրու գնակ Ծուշից:

(Հեղ)

Այս մեջքերման մեջ կրծատված են երեք մանրամասներ, որոնց տեղում նշանակված է քազմակետ:

**6. Ենթամենան** դրվում է տողադարձի դեպքում.

սո-	սովո-
վորել	րել

**7. Աղարացը** գործածվում է

Ա. Արևմտահայ գրական լեզվում. դրվում է բառի զեղչած ձայնավորի փոխարեն, հատկապես կը, մը մասնիկների ը-ի սղման դեպքում.

## Օրինակ՝

- ա) Հայուիի մ'էր վեր ելնողն,  
Բարձրահասակ և գեղադեմ.  
Մնակ մոտեն նե սիզածեմ,  
Նստակ անկյուն մ'իմծ դեմ առ դեմ:

(Պ. Գուրյան)

թ) Կիսալուսինն հազիվ թե շող մ'արձակած,  
Թաղվիլ կ'երքա մոլք-գոյմ ամպերում ետիմ....  
(Մ. Մեծարենց)

գ) Կ'անցնին հովերմ ողբազին  
Դիակներում վրայնն և վրայնն փլատակին....  
(Պ. Վարուժան)

դ) Զինջ պսակն այդ կարծես դափինի մ'է դժույն....  
Սարուր կյանքի մ'արտարիտում է, ինչպես  
Ժյունն երկրի:

ե) Ռոյի մ'ութիմ ես նրբանոյշ,  
Սիրո ուղիին մետաքսավեռ,  
Որում իրմայրճ երջանկանուց՝  
Ա'ոգևորե զիս առ հավետ:

(Մ. Մեծարենց)

Բ. Արեմտյան թ. օ և նման նախամասնիկներով կազմված  
հատուկ անուններում, որոնք համապատասխան լեզվում գրվում  
են ապարագով.

## Օրինակ՝

Ժաննա դ'Արկ, դ'Ալամբեր, դ'Անոնցիո, Օ'Հենրի, Օ'Նիլ:



## 3. Առողանության նշաններ

Առողանության նշաններն են շեշտը (,), հարցականը (՞), բացա-  
կանչականը (~): Նրանցով նշվում են հնչման ելևէշները՝ համապա-  
տասխան վերաբերմունք, հաղորդակցային երանգ արտահայտելու  
համար:

### 1. Շեշտը դրվում է՝

Ա. Յրաման, կոչ, կարգադրություն, առաջադրանք, հորդոր  
և համանման իմաստ արտահայտող այլ բառերի, բառաձերի  
վրա, որոնցով խոսողը դիմում է խոսակցին՝ համապատասխան  
պահանջով.

## Օրինակ՝

ա) Ելեք, զարբնեցեք, կանգնեցեք արրում.  
Գիտցեք, քննում են գետերն ու քամին,  
Սակայն չի քննում երբեք քշնամին:

(Ակ Խահակյան)

բ) Ծախրի՛ք, սավառնի՛ք, պլացի՛ք հպարտ,  
Հայոց աշխարհի սրաթև արծիվ:

(Վ. Գալյոյան)

գ) Իւսիաննե՛ր, չծախնե՛ք մեր հոգիները:

(Պ. Գևիրջյան)

դ) Բարձրացնե՛լ ուսման ուսակը:

ե) Զե՛նք չտալ ողարսիկներին...նրանի կոբաւին Արտաւառում:

(Վ. Գևիրջյան)

զ) Երբ կրհոգնես, կրզազագես աշխարհից,  
Դարձիր ինձ մոտ, վերադարձիր դու նորից...  
(Վ. Տերյան)

է) – Առաջ դեմքի թշնամու դիրքերը, – հրանայեց սովան:

### Ծանոթություն 1:

Հրանայական եղանակի բայածեի վրա կարող է շեշտ չդրվել՝  
պայմանավորված որոշակիորեն մեղմ հնչերանգով:

Օրինակ՝

Հասմիկ, խնդրում եմ՝ լուսամուտը փակիր:  
Դավիթ, արի գրատախակի մոտ:

### Ծանոթություն 2:

Հրանայական եղանակի բայածեի և հրանայականի դերով գործածիքը այլ բառի շեշտը կարող է անցնել այդ բառերի նախադաս լրացմանը, եթե շեշտված է արտաքրելվում նրանց նախադաս լրացումը:

Օրինակ՝

Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեն:  
(Հ. Թումանյան)  
– Մի բաժակ ջո՞ր տու ծարավ ճամփորդին:  
– Ծամ զինամբեր հասցնել ճարտիկներին:

### Ծանոթություն 3:

Հրանայական նախադասության մեջ շեշտի փոխարեն կարող է գործածվել բացականշական, եթե բառն արտաքրելվում է բացականչումով:

Օրինակ՝

ա) Հեյ, օգնեցե՞ք,  
Սեռած ի՞ն չե՞ք:

(Հ. Թումանյան)

բ) Առաջ օ: Թող որոշան ձեր անզոր քնդանորները:

(Վ. Սարդյան)

զ) Եկա՞մ, չկնորսնե՞մ, ուղևան զցիցի ՞:

(Հ. Թումանյան)

Բ. Կոչականի վրա, իսկ եթե նախադաս լրացումներ ունի,  
սովորաբար նրան նախորդող բառի վրա (բացի դերանունից):

Օրինակ՝

ա) Պտտվիր, պտտվիր, կարուսել,  
Ես քո երգը վաղոց եմ լսել...

(Վ. Տերյան)

բ) Երկիր Հայաստան, նորից լեռնային ճամփադ է իմ դեմ...  
Երկիր առեղծված, դեռ պիտի իջնեմ վիհերը ոգույ,  
Այնտեղից ուկն աստղերդ դիտեմ...

(Վ. Գալթյան)

զ) Խոսք-աղոքի կարո՛ւ սարեր,  
Սարդու ոսքի կարո՛ւ սարեր,  
Սարո՛ւ սարեր, ցավո՛ւ սարեր,  
Սարեր, ձեզ ի՞նչ ասեմ:

(Հ. Սահյան)

Իմ բարեկա՞մ, իմ սե՞ր, հերտսակա՞ն ընկեր,  
Դու ապրեցիր, անցար ու չկաս հիմա:

(Ե. Չարենց)

### Ծանոթություն:

Կոչականի կամ նրա նախադաս լրացման շեշտի փոխարեն կարող է դրվել բացականշական, եթե բառն արտաքրելվում է բացականչումով:

*Օրինակ՝*

Հարազատներ, իմ շատ սիրելի հայրենակիցներ, այսօր իմ հոգական աշխարհում իրար են խառնվել մեր հանդիպման իրձվանքը և առաջիկա բաժանման տրտությունը:

**Գ. Կամային և բնածայնական ծայնարկությունների վրա.**

*Օրինակ՝*

ա) — Ե՞յ, այդ ինչո՞վ ես գրադված:

(Ա. Զորյան)

բ) — Փի՞ս, փի՞ս, — Վեր բռամ ամենին, իսկ ծիծեռնակը սուր ծղրտոցով ընկավ կատվի եւսից:

(Հ. Թումանյան)

գ) — Շըլսկ, — Աքության մեջ լսվեց գետնին տաղալվելու ձայն:

**Դ. Նախադասության մեջ որևէ բառի վրա, որին խոսող տրամաբանական, ոճական առումներով հատուկ կարևորություն է տալիս և ուզում է շեշտել.**

*Օրինակ՝*

Հիմա բոլորին հրավիրեցեմ դասիին:

Հիմա բոլորին հրավիրեցեմ դասիին:

Հիմա բոլորին հրավիրեցեմ դասիին:

Հիմա դասիին հրավիրեցեմ բոլորին:

**Ծանոթություն 1:**

Կրկնադիր շաղկապների վրա շեշտ նշանակելը պարտադիր չէ. ավելի հաճախ դրանք չեն շեշտվում.

*Օրինակ՝*

Իմաստում է և արդար

Օրերի երգմ անընդհատ,

Դառը տանջանք ու դադար,  
Եվ սեր, և վիշտ, և հերիաք...

(Վ. Տերյան)

Եվ չըկար ոչինչ, որ սիրուս դյութեր.  
Ոչ սիրո կարոտ, ոչ բախտի ծարակ,  
Ոչ հարստության և մեծության բեռ:

(Վ. Տերյան)

**Ծանոթություն 2:**

Ծեշտ նշանակելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հայերենի շեշտադրության հետևյալ կանոնները.

1. Ժամանակակից գրական հայերենում բառի շեշտը սովորաբար դրվում է վերջին վանկի վրա:

*Օրինակ՝*

Չնկե՞ր, ընկերնե՞ր, քաղաք, քաղաքացի, քաղաքացիություն, իններորդ, քանութերո՞րդ, վեցակա՞ն և այլն:

2. Ե հոդք և բառավերջի փակ վանկի քայլափորք (որը չի գրվում) շեշտ չեն ստանում, որի հետևանքով ննան դեպքերում բառի շեշտն ընկնում է նախավերջին վանկի վրա:

*Օրինակ՝*

**Ծաղիկը, ծառերը, գիրքը, բանքը, կարձը, վագր:**

3. Մի բանի համադրական կազմություններում շեշտը սովորաբար դրվում է առաջին վանկի վրա:

*Օրինակ՝*

**Գուցե, մի՛գուցե, մանավանդ, մանանավանդ:** Մի՛ք բառում միշտ շեշտվում է առաջին վանկը:

*Օրինակ՝*

4. Որոշ փոխանոյալ բառերի, հատկապն անունների ուղիղ

ձեռմ շեշտը դրվում է ոչ վերջին վանկի վրա. խս նրանց բառակազմական ու քերականական ձևերում վերջին վանկի վրա:

### Օրինակ՝

Լերմոնտով, լերմոնտովյան, Լերմոնտովի՛, Լերմոնտովի՛ց, Ասիա, ասիակա՞ն, ասիացի, Ասիայի՛, Ասիայի՛ց, Ամերիկա, ամերիկյա՞ն, ամերիկացի, Ամերիկայի՛, Ամերիկայի՛ց, Բուլղարիա, բուլղարակա՞ն, բուլղարացի, Բուլղարիայի՛, Բուլղարիայի՛ց, Անտարկտիդա, Անտարկտիդայի՛, Անտարկտիդայի՛ց:

5. Հարադրական բայերի շեշտը դրվում է առաջին ոչ բայական բաղադրիչի վրա:

### Օրինակ՝

Ցույց տալ, յայն տալ, ման գալ, պար գալ, վեր կենալ, մայր մպնել, գլխի ընկնել, աչքի ընկնել բաց անել:

6. Հարադրական կազմությանը մի շարք բառեր, որոնց վերջին բաղադրիչը **թէ**, **որ** բառերն են, շեշտը կրում են առաջին բաղադրիչի վրա:

### Օրինակ՝

Ասես թէ, միայն թէ, ինչպես թէ, հազի՞վ թէ, ե՞րբ որ, հենց որ, բանի՞ որ, մինչև որ և այլն:

7. Արգելական հրամայականի շեշտը դրվում է **մի՛** արգելականի վրա:

### Օրինակ՝

—Մի՛ խռախր այդուս խրատական ոգով, տե՛ր Վահենոնյաց, —խստ-  
րեն հանդիմանց կարողիկոր (**Դ. Զ.**):

Մի՛ դարձրու այդպես ամիրական, անհաս  
իմ հսկարակ, հսկասու երազը լուր:  
(Ս. Հայուրյունյան)

2. Հարցական նշանը դրվում է այն բառերի վրա,  
որոնք արտաքերվում են հարցական հնչերանգով.

### Օրինակ՝

Լիլիթը գնա՞ց գրախանուր:

Լիլիթը գնաց գրախանուր:

Լիլիթը գնաց գրախանուր:

### Ծանոթություն:

Բարի մեջ հարցական նշանը դրվում է այն վանկի վրա, որի վրա  
դրվում է շեշտը:

### Օրինակ՝

Մի՞ թէ ժեզ համար ամեն ինչ դարձ չէ:

Ի՞նչ անել վագե՞լ նրա հետևից, ձա՞յն տալ:

Ամե՞րիկա ես գնում, Ամերիկայո՞ւմ դիմի գտնես  
երջանկություն:

## 3. Բացականչական նշանը դրվում է՝

**Ա Զայնարկությունների, այդ թվում և բնածայնականների վրա,** որոնք սովորաբար արտաքերվում են բացականչական հնչերանգով.

### Օրինակ՝

ա) **Վա՛յ**, զաղսնի լիճը դա՞ է.... **Վա՛**, ինչքա՞ն բոշուն կա: Խսկ սրանք ի՞նչ են, քններ են... **Վա՛հ**, ինչքան բուն կա (Վ. Անաման):

բ) **Օհն**, աչերդ կարմրեցին, ձայնդ դողաց, չինի՞ սիրահաւ-  
կած ես (Շիրվանզադե):

գ) **Ե՛հ**, արեֆ, ինչ ուզում եմ, — ասաց նա խորին ամսարեւու-  
թյամբ (Նար-Գոս):

դ) **Օ՛ն**, ուրեմն կատարենք մեր դարտեր (Մուրացան):

ե) **Հե՛յ**, դարմաներ, տեսա կանաչ գարունին, ես սարեւում  
լաց եր լինում մի դախրա (Հ. Թումանյան):

զ) Օ՛, զբերի աշխարհը տեղերի է անեց:

(Ե. Չարենց)

է) Քամին գլորում է պահածոյի տուփը  
Փողոցն ի վեր, ի վար.

Չըրք նզ, զըրք նզ, զըրք նզ:

(Ա. Գալոյան)

**Բ.** Նարցահարաբերական դերանունների վրա՝ նրանց բացականյական կիրառության դեպքում բարի իմաստը շեշտելու և հուզական երանգ հաղորդելու նպատակով.

Օրինակ՝

ա) Այդ ի՞նչ սրտամաշ տխրություն է քեզ

Դատել, հայրենի գեղեցիկ աշխարհ....

(Հ. Թումանյան)

բ) Ո՞վ կարող է համարձակել դիմել այդ բայլին:

գ) Ինչո՞ւ և գեղեցիկ է աշունը Հայաստանում:

դ) Որքա՞ն մեծ էր Հայաստանը, և որքա՞ն փոքր է նա այժմ:

ե) Ինչպիսի երազներ ու երազանքներ են դարուրում մեզ դատանորյան սարիներին:

զ) Քանի՞ տարի է ես ենաց շնչ տեսել:

Այսպիսի կառուցվածքի նախադասությունները բացականշական են երանգով (և համապատասխան կետադրությամբ) ստանում են արտասանական նշանակություն՝ արտահայտելով պատմողական իմաստ: «Ինչքա՞ն գեղեցիկ է աշունը Երևանում» նշանակում է «Ծագր գեղեցիկ է աշունը Երևանում»:

**Գ.** Նրամայական բայածի շեշտի փոխարեն՝ խոսքին հուզական երանգ տալու նպատակով.

Օրինակ՝

ա) Ծող՝ շողա՝, բարի՝ արև, իմվանդ եմ:

(Մ. Մեծանենց)

բ) Զարդի ու քեզ մաշող բանտի փականքը....

(Գ. Էմին)

զ) Յամեն՝, ցամեն՝ նոյմիսկ հեռու սահմանեն,  
Ալաղերու պնա, ալիքներու պես ցամեն՝:  
Ծիսերճ ի նչ չփոյք, թե հաստիկմերդ կավերեն.  
Տեղը աստված պիտի մարգիտ սերմանեն:

(Կ. Վարուժան)

դ) Դուք էլ խսեցե՞ք, դուք էլ պատմեցե՞ք  
Ձեր անդունդներով եկեք շափկեցե՞ք....

(Հ. Թումանյան)

ծանոթություն 1:

Բացականշական նշանը դրվում է բարի այն վանկի վրա, որի վրա դրվում է շեշտը:

Օրինակ՝

Ողջո՞ւմ քեզ, անհայտ անձանոթ քննկեզ,

Խաղաղություն քեզ, հեռավոր նորայր,

Ողջո՞ւմ ձեզ, վաղվա շննված կյանքեր:

(Ե. Չարենց)

Սիրե՞լ ու կրկին սիրել խնդագին,

Փայլիայե՞լ քննուզ, լինել հարազատ,

Հեռանա՞լ դառնա՞լ կրկին ու կրկին

Անոնք աշխարհում բացսիրտ ու ազատ:

(Լ. Տերյան)

ծանոթություն 2:

Բացականշական նշանի գործածությունը հաճախ զուգակցվում է բառերի կրկնության հետ, և դրանով ավելի է շեշտվում միտքը, ավելի հուզական է դառնում խոսքը:

ա) Ի՞նչ է քողել նա մեզ.

Մեզ քողել է զոհել ր, կրկին զոհել ր, զոհել ր  
Զոհված երազմերի հիշատակներ անմար....  
(Ռ. Գավոյան)

բ) Իսկ մեզ հարկավոր էր, որ ինչ-ոք տեղ մարդը....

Հնդիւմ ավերակող ու ճարակող իրի,  
Եվ կրկի տար ոչ թե ընդդեմ մ, ընդդեմ մ, ընդդեմ մ,  
Այլ լրկ  
Հանու մ, հանու մ, հանու մ ուրիշների:

(Ռ. Գավոյան)

գ) Եվ մեծ քնորյամ իրաշքմերի պես

Սնոնում ենք երկա ր, երկա ր ու երկա ր,  
Այդպես ապրում ենք հավիտենապես:

(Ռ. Գավոյան)

դ) Այս, ի՞նչ լավ են սարի վրա

Անցնում օրերմ անո՞ւ, անո՞ւ,  
Անքային, թեթևասահ,  
Ամպ ու հովերմ անո՞ւ, անո՞ւ:

(Հ. Թումանյան)

### Ծանոթություն 3:

Բացականշական նշանի, շեշտի գործածության չափը հաճախ կախված է գրողի (հեղինակի) անհատական հակումից: Որոշ հեղինակներ առավելագույն չափով են օգտագործում առողջանորդությունը՝ առավել լիարժեք արտահայտելու համար իրենց հոլովերը, խոհերը:

Սակայն դեռ երեկ մի հա մը չէր փլվում,  
Այլ մի բովանդակ երկի մը անողոք,

Եվ փլվում ոչ մեկ, ոչ էլ տասնըմեկ,

Այլ միշտ ու ու մեկ բշվառի զյուին....

Եվ երեկ ոչ մեկ, ոչ էլ տասնըմեկ,

Այլ միշտ ու ու մեկ մարդ էր հոնդրում

Սի համատարած բացօրյա բանուում...

Եվ սովանահ էր լինում քոնությամբ,

Քարից հաց քամող մի ամրո՞ղ երկիր...

Արար էր քշվում բովանդակ մի ազգ

Ու տաշվում-մաշվում բովանդակ մի ցեղ...

Եվ այն ժամանակ, երեկ տակավին,

Ո՞ւ էր ականջը հանուր մարդկության,

Որ շամաց, օ, ոչ, չուզեցա վ լսել

Սի ամրող ազգի կանչը կաղկանձուն.

—Կոչեմ ապրողա ց...

(Պ. Սևակ)



## **ԲՈՎԱԴՐԱԿԱՆԻԹՅՈՒՆ**

Կեպադրության դերի, կանոնարկման և	
կիրառության մի քանի հարցեր.....	3
Տրնության նշաններ.....	4
Բացահայտության նշաններ.....	38
Առողջանության նշաններ.....	53

### **Սերգեյ Գյանջումի Աբրահամյան**

### **ՀԱՅԵՐԵՆԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Խմբագիր՝

Գեղ. Խմբագիր՝

Տեխն. Խմբագիր՝

Դամակարգչ. շարժաձր և էջադրում

**Կ. Մաֆրազյան**

**Գ. Գյուլամիրյան**

**Ռ. Ախիրյան**

**Ե. Մավայանի**

UNIVERSITY OF MICHIGAN



3 9015 05551 7695

Չափսը՝ 60 x 841/16; Պայմ. 3.72 մամ.; Հրատ. 3.0 մամ.:

Տպաքանակը՝ 3000; Պատվեր՝ 10:

*«Լուս հրապարակություն» ՓԲԸ, Երևանի 9, Իսահակյան 28:*

*Տպագրություն «ԱՐԳՈ» ՍՊԸ*